Azg
ԱԶԳ
29 ՄԱՐՏ 2005 ԵՐԵՔՇԱԲԹԻ 54 (3220)

Մեծ երկրաշարժ Սումատրա կղզու մոտ

Սպասվում է նոր ցունամի

Երեկ ուշ երեկոյան Սումատրա կղզուց 212 կմ հեռու, օվկիանոսի հատակում նորից ուժգին երկրաշարժ արձանագրվեց: Ցնցման ուժգնությունն էպիկենտրոնում կազմել է 8.2 բալ, որը դասվում է մեծ երկրաշարժերի շարքին: Կղզու ամբողջ տարածքում, ինչպես նաեւ հարեւան Ինդոնեզիայի ափամերձ շրջաններում հստակորեն զգացվել է 2-3 րոպե տեւած ցնցումը: Առայժմ որեւէ տեղեկություն չկա զոհերի եւ կորուստների մասին: Ամբողջ գիշեր միջազգային սեյսմոլոգիական կենտրոններն տատանվում էին եւ շրջանի երկրներին զգուշացնում հավանական ցունամիի վտանգներից, որոնք տարածաշրջանի երկրներին կարող են հասնել 3-4 ժամվա ընթացքում: Արդեն Մ. Նահանգներից եւ այլ երկրներից տատանվելի են բերված փրկարարական կազմակերպությունները եւ տարածաշրջանի ազգաբնակչություններին խորհուրդ է տրվում նախազգուշական միջոցներ ձեռք առնել, անգամ սկսել էվակուացիան՝ առաջին հերթին ափամերձ շրջաններից:

Բոլորը վախենում են դեկտեմբերի 26-ի աղետի կրկնությունից, երբ տարածաշրջանի երկրներում զոհվեց շուրջ 250 հազար մարդ, մեկուկես միլիոն մարդ զրկվեց օթեւանից:

ԵԱՀԿ զեկույցը հեռագայում կարող է գլխացավանք դառնալ Հայաստանի համար

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ

Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների կենտրոնի փորձագետ Ստեփան Սաֆարյանը կարծում է, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի փաստահավաք առաքելության պատրաստած զեկույցը հետագայում կարող է հանգեցնել նրան, որ միջազգային հանրությունը փորձի Լեռնային Ղարաբաղին հարակից տարածքների խնդիրը լուծել առանձին, իսկ ղարաբաղյան խնդրի կարգավորումը թողնել աղագային:

Երեկ «Գործընկերություն հանուն բաց հասարակության» նախաձեռնությունը կազմակերպել էր կլոր սեղան, որին հրավիրված ՀԿ-ների ներկայացուցիչները, քաղաքական գործիչները, քաղաքագետները եւ փորձագետները ներկայացին ԵԱՀԿ Մինսկի խմբի փաստահավաք առաքելության պատրաստած զեկույցը:

Փորձագետ Սաֆարյանը նշեց աղագայում հնարավոր այն վտանգները, որոնք կարող են կանգնել Հայաստանի առաջ: Սաֆարյանը մասնավորապես զեկույցից տպավորություն է ստացել, որ բացի Լաչինից, ԼՂՀ հարակից մյուս տարածքներում չկա վերահսկողություն, դրանք անկառավարելի, անվերահսկելի գոտիներ են, ինչը շարունակ պնդում է Ադրբեջանը: Լաչինի դեպքում նշվում է, որ վերաբնակեցումները կատարվել են ՀՀ-ի եւ ԼՂՀ-ի անմիջական միջամտությամբ, ինչն, ըստ փորձագետի, հետագայում կարող է նոր շահարկումների տեղիք տալ: Իսկ ամենավտանգավորը, Սաֆարյանի կարծիքով, հարակից տարածքները կարող են աղագայում ԼՂՀ կարգավորման գործընթացից առանձին դիտվել:

Տես էջ 2

ԿԲՈՐՅՐԱՆԱՆ ՃԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴ

12 արաբ ցեղախմբերի աշիրեթապետները ժամանեցին Հայաստան

Երեկ աշիրեթապետներին ընդունեց ՀՀ արտգործնախարար Վարդան Օսկանյանը, որը նրանց հետ խոսում էր արաբերեն:

Հայոց ցեղասպանության 90-րդ տարելիցի կապակցությամբ Սիրիայից երեկ Հայաստան են ժամանել 12 արաբական ցեղախմբերի աշիրեթապետներ, որոնց հայրերը ցեղասպանության տարիներին բարեգթորեն աղասան են տվել թուրքերի գազանաբարո գործողություններից մի կերպ փրկված սակավաթիվ հայերին:

Նրանք Հայաստան են եկել Սիրիայի հայ համայնքի նախաձեռնությամբ, իրենց գլուխը խոնարհելու հայ նահատակների հիշատակը հավերժացնող Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում եւ բարձրաձայնելու առ այսօր Հայոց ցեղասպանությունը հերքող Թուրքիայի քաղաքականության դեմ:

Աշիրեթապետները մեր երկրում կհյուրընկալվեն մինչեւ ապրիլի 3-ը, այդ ընթացքում կայցելեն Սբ. Էջմիածին, որտեղ նրանց կընդունի Ամենայն հայոց կաթողիկոսը, կհանդիպեն կառավարության ղեկավարների եւ ԱԺ պատգամավորների, Երեւանի պետական համալսարանի դասախոսական կազմի հետ:

Այսօր ժամը 12-ին 12 աշիրեթապետները կայցելեն Ծիծեռնակաբերդ:

Ռ. Պ.

Տնական թալան

ՄԵԼՐՈՆՅԱ ԲԱԳԱԼՅԱՆ

Քրիստոնեությունն ազգային կամ աղազգային տարազ չէ, ոչ էլ ծես ու ծիսակարգ կամ արարողություն, քրիստոնեությունն աղրելակերպ է, նույնիսկ՝ ոչ իսկ գաղափարախոսություն: Նախորդ շաբաթ՝ Ծաղկազարդի տոնին, երբ հավատացյալ ժողովուրդը շարականական երգեցողությամբ Սուրբ Սարգիս եկեղեցուց դեպի Մայր տաճար էր շարժվում, Երեւանի փողոցներում շատ անցորդներ նրանց նայում էին զարմացած հայացքներով: Աղոթասաց քահանան սքիզված էր լինում երբեմն-երբեմն նրանց հիշեցնել իրենց ինքնությունը (սրանց ծիծաղին կամ հեգնանքին ի պատասխան). «Դուք մոռացել եք, թե ո՞վ եք»: Նրան հետեւող հավատացյալ խումբն այդ նույն հարցին պատասխանում էր. «Մենք քրիստոնյա հայեր ենք»: Հանրապետության հրապարակում քահանան երբ աղոթք էր անում, եւ հավատացյալները շարականներ էին երգում, կենտրոնական հրապարակի գլխավոր գովազդային վահանակը «Դարյայի» մասին էր բարբառում:

Տես էջ 3

Գինովցած հրեա ուղղափառը հարձակվել է հայ հոգեւորականների վրա

«Ցերուսալեմ փոստ» թերթի հաղորդմամբ, երեկ Երուսաղեմի ոստիկանությունը ձերբակալել է նախորդ օրը Հին քաղաքում հայոց վանքի 2 հայ հոգեւորականների վրա հարձակված ուղղափառ ծայրահեղական հրեային: Կիրակի օրը հրեա ուղղափառները նշել են Պուրիմը, որը տարվա նրանց ամենաուրախ տոնն է. գինովցած դուրս են գալիս փողոց, երգում ու պարում են: Թերթը նշում է, որ հայերի վրա հարձակված հրեան խմիչքի ազդեցության տակ է եղել:

Այլ մանրամասներ թերթը չի հաղորդում, միայն նշում է, որ հայ հոգեւորականները բժշկական օգնության կարիք չեն ունեցել:

Վերջին 6 ամիսների ընթացքում Երուսաղեմի ոստիկանությունում գրանցվեց հայ հոգեւորականների վրա հարձակվելու երրորդ դեպքը:

Հայոց ցեղասպանության 90-ամյակին նվիրված քայլարշավ Ֆրեզնոյից մինչեւ Սակրամենտո

ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ, 28 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Այս շաբաթ մի քայլարշավ է սկսվում Կալիֆոռնիայի Ֆրեզնո քաղաքից մինչեւ Սակրամենտո: 350 կմ ճանապարհն անցնելու են տասնյակ մարդիկ, այդ թվում ոչ հայեր, որոնց մի մասը, քայլելով 19 օր, Կալիֆոռնիայի մայրաքաղաքում օրենսդիր մարմնի մոտ հավաքվելու ու շնորհակալություն է հայտնելու այդ նահանգի եւ երկրի մյուս 36 նահանգների օրենսդիրներին՝ Հայոց ցեղասպանությունը պաշտոնապես ճանաչելու համար: «Քայլարշավ՝ հանուն մարդկության» միջոցառումը, որն ամերիկահայերի նախաձեռնությունն է, նպատակ ունի հիշելու նաեւ այլ երկրներում մարդկության դեմ իրականացված հանցագործությունների զոհերին: Ինչպես արշավի կազմակերպիչներն են ասում, այս նպատակի համար բացված ինտերնետային էջն այնքան այցելու է ունեցել, որ իրենք չէին կարող պատկերացնել անգամ այն կազմելիս: Քայլարշավին իրենց բարոյական եւ ֆինանսական աջակցությունն են հայտնել տասնյակ համայնքներ Կենտրոնական Կալիֆոռնիայից, Վաշինգտոնից, Նյու Յորքից ու Բոստոնից: Քայլարշավի մասնակիցները Սակրամենտո կհասնեն ապրիլի 21-ին:

Թուրքերը ապրիլի 24-ին ցույց են անելու Վաշինգտոնում

ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ, 28 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ԱՄՆ-ում բնակվող թուրքերը նախապատրաստվում են ապրիլի 24-ին ցույցի դուրս գալ Վաշինգտոնում: Նրանք հայերի կողմից անցկացվելիք միջոցառումներին ի պատասխան հավաքվելու են Սպիտակ տան առջեւ: Կազմակերպիչների խոսքերով, թուրքական այդ ցույցին միայն 500 հոգի մասնակցելու է Նյու Յորքից: Կազմակերպիչները Եվրոպայում բնակվող թուրքերին նույնպես կոչ են անում նման բողոքի ցույցեր սկսել Հայոց ցեղասպանությունը ճանաչելու դեմ:

ԱՊԱՌԱՍԱՐԻՔ ԿԱՅԱԿՆԵՐ

Նովոռոսիյսկի հայերը վախենում են երեխաներին ուղարկել դպրոց

Նովոռոսիյսկում մարտի 22-ի երեկոյան տեղի ունեցած դեպքերը կարելի է միանշանակ կերպով բնութագրել որպես ծեծուջարդ քաղաքի առանձին շրջանում: Այդ մասին Ռուսաստանի հայերի «Երկրամաս» թերթին տված հարցազրույցում հայտարարել է հայկական մշակույթի «Լույս» քաղաքային ընկերության վարչության անդամ, Նովոռոսիյսկի ազգային համայնքների համակարգող **Ալլա Պարցիկյանը**: Միաժամանակ նա հաստատել է ավելի վաղ հաղորդված այն տեղեկությունը, որ մարտի 21-ի լույս 22-ի գիշերը քաղաքի սրճարաններից մեկում ծննդյան օր նշող հայ եւ հույն երիտասարդների խումբը կազակների հետ ծավալված ծեծկռտուքի ընթացքում մարմնական ծանր վնասվածքներ է պատճառել նրանց ասամանին:

Տվյալ միջադեպի մանրամասնություններին կարելի է ծանոթանալ **«Ազգի»** մարտի 25-ի համարում: Ցավալին այն է, որ կազակները կենցաղային բնույթի այդ միջադեպն օգտագործեցին հակահայկական տրամադրություններ բորբոքելու նպատակով: Մարտի 22-ի երեկոյան Կրասնոդարի երկրամասի մի շարք շրջաններից կազակներ եկան Նովոռոսիյսկ եւ վայրագություններ գործեցին նույն սրճարանի շրջանում՝ ջարդուփշուր արեցին ավտոմեքենաներ, սրճարանի եւ խանութի ապակիներ, ծեծեցին մի քանի մարդու:

Հայտնի է, որ միջադեպի առթիվ քրեական գործ է հարուցվել Քրեական օրենսգրքի 111-րդ («Մարմնական ծանր վնասվածքների պատճառում») եւ 213-րդ («Խուլիգանություն») հոդվածներով:

Չնայած քաղաքի վարչակազմը եւ իրավապահ մարմինները կտրուկ միջոցներ են ձեռնարկել հակամարտության տարածում թույլ չտալու նպատակով, Նովոռոսիյսկի հայերը մտահոգ են մնում: Մինչ օրս նրանք զանգահարում են «Լույս» ընկերություն, հարցնում, թե կարելի՞ է արդյոք երեխաներին ուղարկել դպրոց:

Նովոռոսիյսկի ներկայիս քաղաքապետ Վլադիմիր Սինյագովսկին 2002 թ. նոյեմբերից փոխարինում է Վալերի Պոխորենկոյին, որի նկատմամբ քրեական գործ է հարուցված: Անցյալում Սինյագովսկին գլխավորում էր Կուբանի Սլավյանսկ քաղաքի վարչակազմը: Այնտեղ եւս 2002 թ. տեղի էր ունեցել հայերի ծեծուջարդ:

Պ. Ք.

ԸՆԹԱՑԻԿ

Ռաֆիկ Պետրոսյանը՝ նեղացել, իսկ Արմեն Դանիելյանը բացակայում էր

ՄԴ փոփոխությունների երկու նախագծերի 6-րդ գլուխները քննարկվեցին

ՀՀ սահմանադրության փոփոխության երեք նախագծերի քննարկումներն ԱԺ եվրոպական կառույցներին ինտեգրման հանձնաժողովում նախորդ անգամ տեղի չունեցան՝ քվորում չլինելու պատճառով: Այս անգամ չներկայացվեց կոալիցիայի նախագիծը ներկայացնողի՝ Արմեն Դանիելյանի բացակայության պատճառով: Ինչը հանձնաժողովի նախագահ Տիգրան Թորոսյանը մեկնաբանեց երկու բառով. «Մարդը չի եկել»: Հիշեցնենք, որ նախորդ՝ կայացած քննարկման ժամանակ Թորոսյանը նախագահողի իրավունքով կոալիցիայի նախագծի հիմնական ներկայացնողին՝ Ռաֆիկ Պետրոսյանին խնդրել էր թյուրիմացության հիմքեր չստեղծել եւ ներկայացնել միայն կոալիցիայի նախագիծը: Պատասխանը Պետրոսյանի անթափույց դժգոհություն զարմանքն էր: Անթափույց էր նաեւ պատգամավոր Խաչիկ Սոմիասյանի հարցի ենթատեքստը. «Պարոն Պետրոսյան, ո՞վ կարող է փոխարինել ձեզ նախագիծը ներկայացնելու հարցում»: Սա նախորդ նիստում էր, իսկ երեկվա քննարկման առարկան սահմանադրության դատական իշխանությունների վերաբերող գլուխն էր:

Երեք նախագծերի համաձայն էլ արդարադատության խորհուրդը կազմվում է 12 մասնագետներից: Կոալիցիայի եւ ՄԱԿ-ի դեպքում՝ 5 տարի, Արշակ Սադոյանի նախագծում 3 տարի ժամկետով: Վերջինիս առաջարկով 12-ից 9-ն ընտրվում է ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի փակ գաղտնի քվեարկությամբ, 3-ին նշանակում է Ազգային ժողովը: Արդարադատության խորհրդի նախագահին ընտրում է խորհուրդը: Կոալիցիայի նախագծի համաձայն, 9 դատավորներն ընտրվում են նույն ժողովի գաղտնի քվեարկությամբ, իսկ 3 իրավաբան-գիտնականներին նշանակում է հանրապետության նախագահը, որը նաեւ գլխավորում է արդարադատության խորհուրդը: ՄԱԿ-ն առաջարկում է դատավորների ընդհանուր ժողովին գաղտնի քվեարկությամբ 5 տարի ժամկետով ընտրել 6 դատավոր, ԱԺ-ի կողմից նշանակել 2-ական փաստաբան-իրավաբան գիտնական: Արդարադատության խորհրդում, ՄԱԿ-ի առաջարկով, ի պաշտոնե ներառվում են արդարադատության նախարարն ու գլխավոր դատախազը: Խորհրդի նախագահին ընտրում է խորհուրդը, բայց ոչ նրա անդամներից:

ՄԱԿ-ի նախագծով արդարադատության խորհուրդը կազմում եւ հաստատում է դատավորների թեկնածուներին պաշտոնեական պիտանիության եւ ծառայական առաջխաղացման ցուցակները, կոալիցիայի նախագծի դեպքում՝ հաստատումը մնում է հանրապետության նախագահին: ՄԱԿ-ի նախագծի համաձայն, արդարադատություն իրականացնելիս դատավորը եւ սահմանադրական դատարանի անդամը անկախ են, ենթարկվում են սահմանադրությանը եւ օրենքներին: Նրանք չեն կարող ձերբակալվել, բացառությամբ այն դեպքերի, երբ բռնվել են հանցագործություն կատարելու պահին կամ անմիջապես դրանից հետո: Նման դեպքում անհապաղ տեղեկացվում են հանրապետության, արդարադատության խորհրդի, սահմանադրական դատարանի եւ համապատասխան դատարանի նախագահները: Կոալիցիայի նախագծում այս հարցի մոտեցումը նույնն է:

Երեք նախագծերն էլ ընդլայնել են սահմանադրական դատարան դիմողների ցանկը: ՄԱԿ-ի նախագծում սահմանադրական դատարան կարող են դիմել հանրապետության, ԱԺ նախագահները, պատգամավորների առնվազն 1/10-ը, կառավարությունը, տեղական ինքնակառավարման մարմինները, օմբուդսմենը, դատարանները եւ յուրաքանչյուր ոք: Սահմանադրական դատարան դիմողների ցանկը նույնն է երկու նախագծերում էլ, այն տարբերությամբ, որ կոալիցիան ՍԴ դիմելու իրավունք վերապահում է պատգամավորների առնվազն 1/5-ին: Ի սկզբանե այս դրույթին համամիտ էր նաեւ Արշակ Սադոյանը, սակայն հընթացս վերջինս համաձայնեց ՄԱԿ-ի առաջարկած 1/10-ին՝ պնդելով, որ եթե երկիրն ընդդիմության շարքում չունի պատգամավորների 1/10-ը, ապա զարգացման տեսանկյունից դատապարտված է: Սադոյանի նախագծում, ՍԴ դիմողների ցանկում պակասում է «յուրաքանչյուր ոք» արտահայտությունը, քանի որ, ըստ Սադոյանի, այդ դեպքում դատարանն իրոք չափազանց ծանրաբեռնված կաբինետ եւ պետք է որ որոշ խնդիրներ լուծվեն դատարանի ոչ լիարժեք կազմի, այլ երեք դատավորների կողմից: Սադոյանը պնդում է նաեւ, որ ՍԴ-ն պետք է իրավունք ունենա հանրաքվեներ անցկացնելու: Երեք նախագծերում էլ ՍԴ-ի որոշումները վերջնական են եւ ուժի մեջ են մտնում հրապարակման պահից: Ըստ ՄԱԿ-ի, դրանք նաեւ վերանայման ենթակա չեն: ՄԱԿ-ի նախագծում դատախազությանն առնչվող հատվածը ներկայացված է առանձին՝ 6.1 գլխով:

Ն. Պ.

Հայրենական գիտության ծավալների կրճատում ենթադրող գիտության հայեցակարգը փորձում է կայանալ եւ գիտական աղրանքի ստեղծման հիմքեր ապահովել

Հայաստանի գիտական ներուժի զորության մասին ամեն հարմար առիթով խոսվում է ամենաբարձր աստիճաններում եւ ներկայացվում որպես միջազգային շուկայի պահանջները բավարարող ապրանք, որն ավանդաբար գնահատվել է արտերկրում: Որպեսզի գնահատումը շարունակական լինի, մշակվում է գիտության հայեցակարգ, որի առնչությամբ շահագրգիռ կողմերի մասնակցությամբ երեկ խորհրդարանում կազմակերպվել էին լսումներ: Կրթության եւ գիտության փոխնախարար **Արսակ Սահրադյանը** ներկայացրեց գիտության ներկա վիճակն՝ ընդգծելով գիտություն, բուհ, արտադրություն կապի բացակայությունը եւ դրա ստեղծման հրատապությունը: Առանց նշված եռանկյունու գործունակության գիտական ապրանք չի ստեղծի անգամ ամենահզոր գիտական ներուժը, համոզմունք հայտնեց առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարարության գիտության, տեխնոլոգիաների եւ ինովացիոն քաղաքականության վարչության պետ **Ասոն Խանդանյանը** եւ գիտության թենտիկ ֆինանսավորումն այլեւս պետական միջոցների փոքրացում համարեց, քանի որ պահպանման փուլն անցյալ է եւ ժամանակն է հանգուցային բնագավառների ֆինանսավորումն ապահովել: Կառավարության առանձնացրած գիտության բնագավառի ութ գերակայությունները Հայաստանի նման երկրի համար շռայլություն է, ըստ նրա, եւ լիովին բավարար են երեք-չորսը: Այդ շարքից դուրս անբեկանելի գերակայություն համարվեց հայագիտությունը, քանի ու մեզանից բացի այն ուրիշ ոչ ոք չունի: Սահրադյանը մատնանշեց, որ 4 հարյուր հազար դոլար ֆինանսավորում պահանջող համակարգը 4 միլիարդ 102 միլիոն դրամով պահելու փորձն անգամ համակարգը կանի անխուսափելի դանդաղ մահվան: Բանախոսներն ընդունեցին, որ բյուջետային հատկացումներն ամեն տարի աճելով հանդերձ, դեռ փոքր են եւ խիստ անհրաժեշտ է դրամաշնորհային միջոցներից օգտվելու հետաքրքրությունը հենց գիտնականների կողմից: Խանդանյանի գնահատականով իրենց հարգող գիտնականներն արդեն իսկ գործում են բյուջետային միջոցներից անկախ: Բնականաբար այդ կարծիքն առաջացրեց ներկաների **թեթեւ** աղմուկով արտահայտված դժգոհությունը: ԳԱԱ փոխնախագահ **Է. Դուլարդ Ղազարյանը** կարեւորեց գիտաշխատողների սոցիալական վիճակի բարելավումը եւ հայտնեց, որ գիտությունների ազգային ակադեմիան այսպես ասած գոյատեւել է իր գիտական ներուժը եւ, ամերիկյան փորձագետների խմբի կատարած ուսումնասիրությունների արդյունքով կարող է պնդել, որ այսօր էլ կարող է միջազգային ասպարեզ դուրս բերել իր գիտական ներուժը: Բայց դրա համար, ըստ նրա, առաջին հերթին հարկավոր է ստեղծել աշխատանքային պայմաններ եւ գործողությունների հնարավորություն:

Լսումներին մասնակից գիտնականների մի քանիսի դժգոհությունն արտահայտեց ԳԱԱ օրգանական քիմիայի ինստիտուտի գիտական կոչումով տնօրեն **Ալեքսանդր Գետոյանը**՝ ասելով, որ Հայաստանում չափազանց շատ են կոչումավոր միջակությունները, որոնց համարում են գիտնական, եւ այսօր Հայաստանը խնդիր ունի բարձրակարգ գիտնականների եւ երիտասարդ կադրերի պատրաստման: Հենց այդ խնդիրների լուծմանն էլ ուղղված է գիտության հայեցակարգը, որը դեռ մշակման փուլում է, սակայն նշենք, որ այդ փուլում ընթացող քննարկումները ներառում են հիմնականում վերացարկված գաղափարներ:

ՆԵՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՇԵՈՐՇԱՆԵՊԵՍ

Ժողովրդավարության հասնելու հայաստանյան դիտարկումները

«ԱՄՆ-ի գիտահետազոտական եւ կրթական ծրագրերի շրջանավարտների հայկական միություն» հասարակական կազմակերպությունը լույս է ընծայել «Ժողովրդավարության կառուցումը Հայաստանում. նոր մարտահրավերներ» գիրքը, որի շնորհանդեսը տեղի ունեցավ երեկ Խնկո-Ապոր գրադարանում: Ինչպես իր խոսքում նշեց կազմակերպության նախագահ Տարոն Առաքելյանը, գրքում զետեղված են անցած տարվա հոկտեմբերին Ծաղկաձորում տեղի ունեցած սեմինարի նյութերը, որոնց հեղինակները ԱԺ պատգամավորներ են, քաղաքական եւ հասարակական կազմակերպությունների անդամներ, անկախ փորձագետներ եւ լրագրողներ: Սեմինարը, ինչպես եւ գրքի հրատարակությունը ֆինանսավորել է ԱՄՆ կառավարությունը:

Հայաստանում Մ. Նահանգների դեսպան Ջոն Էվանսն իր խոսքում նշեց, որ ժողովրդավարությունը խոսում է եւ մարտահրավեր: Առողջ ժողովրդավարությունը հենվում է ժողովրդավարական քաղաքացիական մշակույթի զարգացման վրա, եւ յուրաքանչյուր երկիր պետք է գտնի իր սեփական ճանապարհը: Նա վստահեցրեց, որ Մ. Նահանգներում հետազոտական աշխատանքներ կատարած մասնագետները նշանակալի դերակատարություն կունենան Հայաստանի զարգացման համար:

Հակիրճ խոսքով հանդես եկան նաեւ ամերիկյան գիտական եւ կրթական հաստատություններում կրթություն ստացած ԱԺ պատգամավորներ Շավարշ Քոչարյանը, Հմայակ Հովհաննիսյանը եւ ուրիշներ:

«Ժողովրդավարության կառուցումը Հայաստանում» գիրքը կբաժանվի Հայաստանի բոլոր գրադարաններին, առաջին նմուշը Տարոն Առաքելյանը երեկ հանձնեց Խնկո-Ապոր գրադարանի տնօրենին:

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

ԵԱՀԿ զեկույցը հետագայում...

1-ին էջից

ՀՀ ԱԳՆ սպառազինությունների վերահսկման եւ միջազգային անվտանգության վարչության աշխատակից **Վարուժան Ներսիսյանն** իր զեկույցում գրեթե նույնությամբ կրկնեց մարտի 17-ին արտգործնախարարության տարածած հայտարարության կետերը, համաձայն որոնց փաստահավաք առաքելությունը հերքեց այն մեղադրանքները, որոնք ՄԱԿ-ում 2004 թ. աշնանը ներկայացրել էր Բաքուն:

Մասնավորապես չհաստատվեցին Ադրբեջանի այն պնդումները, որ ԼՂՀ-ին հարակից տարածքներում վերաբնակիչների թիվը տատանվում է 30 հազարից մինչեւ 300 հազար, Հայաստանը բյուջետային հատկացումներով ոտնձգված վերաբնակեցման պետական քաղաքականություն է վարում, եւ վերաբնակիչների մեծ մասը Հայաստանի քաղաքացիներ են կամ սփյուռքահայեր: Ներսիսյանը համաձայնեց քննարկումներին արտահայտած այն տեսակետին, որ «չի կարելի զեկույցը դնել մի կողմ» եւ հանգստանալ, բայց նաեւ հավելեց, որ դիվանագիտական հարթությունում զեկույցը Հայաստանի համար կարելի է համարել հաջողություն:

Պարույր Հայրիկյանը զեկույցը որակեց «խայտառակ բարոյական պարտություն» Հայաստանի համար: Նա արտգործնախարարության ներկայացուցչին հարցրեց, թե ԱԳՆ-ում չկա՞ մի հայ, որ ասի, թե «բնակեցնում ենք եւ լավ ենք անում»: Ներսիսյանը պատասխանեց, որ արտգործնախարարությունում շատ են հայրենասեր հայերը, սակայն խնդրին ՀՀ ԱԳՆ-ն նայում է միջազգային իրավունքի տեսանկյունից:

Աղասի Եղոյանը զեկույցը համարեց «ահավոր վատ փաստաթուղթ»: Նա հոգեորական հարց տվեց, որ «եթե տարածքները չենք կարող իրացնել, ապա ինչու ենք գրավել»:

Մենք օտարներին պետք է բացատրենք, թե հայկական ուժերն ինչո՞ւ եւ ի՞նչ հանգամանքներից ելնելով են վերահսկողության տակ առել ԼՂ-ին հարակից հինգ շրջաններն ամբողջովին եւ երկուսը՝ մասամբ: Եվ զարմանալ կարելի է քաղաքագետ, իսկ նախկինում լրագրող Եղոյանի անիմաստ հոգեորության վրա:

«Քցոցի»՝ վրացական տարբերակով

Արարատի մարզի Նորակերտ համայնքի 40 բնակիչներ արդեն 2 տարի իզուր փորձում են հետ ստանալ մարզպետարանին վճարած իրենց փողերը:

2003 թվականին նորակերտցիները գումար են հավաքել պարարտանյութ ձեռք բերելու համար: 2 տարի է անցել, բայց ոչ պարարտանյութը կա, ոչ փողերն են հետ տացել: Նորակերտցիների ճակատագրին են արժանացել մարզի բազում այլ գյուղերի՝ Դեղձուտի, Ներքին Դվինի, Վարդաշենի, Գեղառատի, Արմաշի եւ Սուրենավան համայնքի բնակիչները: Գյուղացիները դիմել են ԱԺ պատգամավոր Արամայիս Գրիգորյանին, տեղեկացրել, որ իրենցից հավաքել են 500 տոննա պարարտանյութի գումար: Նկատենք, որ 1 պարկ պարարտանյութը (50 կգ) վաճառվում է նվազագույնը 5 հազար դրամով:

Անկախ հանրապետությունում տեղացած առաջ ձյունից, գարնանային աշխատանքները սարերի հետեւում չեն, եւ գյուղացիների վրդովմունքը տեղին է: Նրանք կրկին պահանջում են իրենց փողերը կամ պարարտանյութը:

Ըստ գյուղատնտեսության նախարար Դավիթ Լոքյանի, պարարտանյութի ձեռքբերման խնդիրը պիտի իրականացներ մարզպետարանում գործող «Արարատ» հիմնադրամը: 2003 թվականին հիմնադրամը Վրաստանից գնել է 800 տոննա պարարտանյութ, իսկ գյուղացիներին տրամադրվելիք մնացած 500 տոննան չեն տացել:

Գյուղացիներից կանխիկ դրամ հավաքած հիմնադրամը, երեւի իրացման առավել շահավետ տարբերակ նախընտրելով, վրացիներից հայթայթած առաջին 800 տոննայից, այնուամենայնիվ, բաժին չի հանել նրանց:

Խնդիրը բարդացվել է կառավարությունում, եւ նույնիսկ ՀՀ վարչապետը Վրաստան այցերի ժամանակ բանակցել է Վրաստանի նախկին եւ նոր վարչապետների հետ, որ գործի մեջ ներգրավվել են նաեւ Վրաստանի իրավապահ մարմիններին: Առայժմ ձեն-ձուն չկա:

Կ. Դ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ԺԳ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
Ֆաքս 374 1 562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am

Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՎԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221

Լրագրողների սենյակ / հեռ. 581841

Համակարգչ. ծառայություն / հեռ. 582483

Շուրջօրյա լրահավաք ծառայություն / հեռ. 529353

Համակարգչային օպերատոր
«Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի

Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

ԸՆԹԱՑԻԿ

Երեւանի փոխքաղաքապետ **Արման Սահակյանի** առաջին այս երկուշաբթի նվիրված էր քաղաքի արտաքին տեսքի կանոնակարգման հարցերին:

Այս միջոցառումն ինչ-որ տեղ հիշեցնում է ճաշից հետո մանանեխ մսուցելու արտքուս անիմաս, իրականում հիմնավոր դրդապատճառներով քաղաքականությանը:

Կրկին կանոնակարգումների ու անկարգության մասին

Առավել սկզբունքային, խորքային հիմնահարցերում, ինչպիսիք են քաղաքաշինությունն ու կանաչապատումը, քաղաքի հերն անիծվել է, եւ ինչ էլ ձեռնարկվի, մնալու է կոմատիկ, մակերեսային հարդարանքի շրջանակում:

Հատուկ հանձնաժողով է ստեղծվել ստորգետնյա անցուղիների ուսումնասիրության ու կանոնակարգման առաջարկներ ներկայացնելու համար: Խոսքը վերաբերում է ոչ միայն հակասանիտարական անտանելի վիճակին, որի պատճառը հասարակական զուգարանների իսպառ բացակայությունն է: Փողոցներից վտարված առեւտրականների մեծ մասն այսօր մթերքը սկսել է վաճառել ստորգետնյա անցակետերում: Քաղաքապետարանը այժմ էլ ստիպված է առեւտրականներին «հետաքրքրել» գետնանցումներում:

Առջեւում շինարարական բուռն միջոցառումներ են իրականացվելու, եւ թափոնների ու շինարարական աղբի բլուրները կրկին կպատեն Երեւանի փողոցները: Շինությունի վաճառակետերն ավանդաբար շարունակում են իրենց ապրանքը գովազդելու տգեղ եղանակ՝ շինանյութի ամենատարբեր տեսակները պարզապես շարում են փողոցում՝ հարուստացնելով արեւելյան փնթի «բազարի» ներկայությունը:

Փողոցային առեւտուրը վերացնելու ժամանակացույցը շարունակում է գործել Տիգրան Մեծի պողոտայում՝ «Այրարատ» կինոթատրոնից մինչեւ «Տաշիր» հանրախանութ, Գարեգին Նժդեհի հրապարակում, Բժշկական համալսարանից մինչեւ «Երիտասարդական» մետրո հատվածում: Եվ անկախ համայնքների ու ոստիկանության աշխատակիցների ցանկությունից՝ ինչ սահմաններում արգելել կամ թույլատրել առեւտուրը, այն ամբողջությամբ վերացնել այդպես էլ չի հաջողվում:

Ասիական խայտաբղետ պատկերները մեր քաղաքում ամբողջացնում են դագաղների ու սգո արարողությունների պարագաների վաճառքի կետերը: Արդեն 10 տարի քաղաքային իշխանություններն ամենայն պարտաճանաչությամբ խոստանում են սրանցից ու ճնշող ներգործությամբ գովազդային ցուցանակներից քաղաքը մաքրելու մասին, բայց այս ամենը մնում է լոկ տեսական դիտարկումների շրջանակում: Որ այս ոլորտում էլ բավական ամրացած կլաններ ու մենատերեր կան, վկայում է թեկուզ այն հանգամանքը, որ որոշ գերեզմանատներում (լրագրողներից մեկի վկայությամբ՝ Շահումյանի գերեզմանատանը) թաղման հողակտոր չեն տրամադրում, եթե դագաղը իրենց տնտեսությունից չեն գնում:

Վերջերս շրջանառության մեջ է դրվել գերեզմանատների մասին նոր օրենքը, որի համաձայն դագաղների ու սգո պարագաների վաճառքը պիտի կազմակերպվի գերեզմանոցներին հարող հատուկ տարածքներում՝ այն էլ փակ տաղավարներում:

Իբրեւ հեռահար նպատակ նախատեսվում է նաեւ դիակիզարանների հիմնումը, որոնց ստեղծումը անհավանական է ոչ միայն անհրաժեշտ ֆինանսական ահռելի միջոցների բացակայության պատճառով, այլեւ որ դիակիզարանները պարզապես չեն համապատասխանում մեր մտածողության ու հավատի բովանդակությանը:

Այս ասպարեզի նորույթը «Նորագավիթ 2», «Սպանդարյան» նոր գերեզմանատներն են: Վերջինս գտնվում է «Շահումյան» գերեզմանատան հարեւանությամբ: Բացի այս, նույն նպատակով քաղաքի սահմաններում առանձնացվել է 53 հա հողատարածք:

Աղբոտի շարժական գազալցակայանների գույքագրման արդյունքում հատուկ հանձնախումբն արձանագրել է օրինական գործող 54 գազալցակայան: Անցած տարեվերջին հայտնաբերվել է 44 աղբոտի լցակայան, որոնցից 16-ը լուծարվել է, 15-ը օրինականացվել, 6-ի գործունեությունը դադարեցնելու միջոցառումներ են իրականացվում: Սկսվել են նաեւ կրպակների հաշվառման, քաղաքաշինական նույնօրինակ լուծումներով առանձին հատվածներում դրանք միասին տեղադրելու աշխատանքները:

ԿԱՐԻՆԵ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Կիրկորովին փոխարինել ստրիպտիզ ակումբներով

Քաղաքապետարանում կայացած ճեպազրույցում փոխքաղաքապետ **Արման Սահակյանն** անդրադարձավ նաեւ վերջին օրերին հասարակական կրեր հուզած խնդրին՝ Ֆիլիպ Կիրկորովի Երեւան այցին: «Երեւանի քաղաքապետարանը երգչի հրավերի հետ ոչ մի կապ չունի, եւ իրավասություն էլ չունի դեմ կամ կողմ լինելու: Նրան Երեւան է հրավիրել «Մանուկյան» ՍՊԸ-ն, իսկ քաղաքապետարանն ընդամենը աջակցելու է նրան, ինչպես կվարվեր մշակութային ցանկացած միջոցառման ժամանակ»:

Փոխքաղաքապետը սպառնաց, որ եթե Կիրկորովին հանդիսատեսը դիմավորի հոտած ձվերով, «իրավապահ մարմինները կվարվեն այնպես, ինչպես յուրաքանչյուր նման խուլիգանության դեպքում»: Ֆիլիպ Կիրկորովի դեմ պայքարելու փոխարեն Արման Սահակյանը խորհուրդ տվեց պայքարել ստրիպտիզ բարերի ու ակումբների, Երեւանը ողողած օտարամոլության դեմ: Մի մանրամասն էլ հիշեցրեց փոխքաղաքապետը՝ Ադրբեջանը փակ երկիր է Կիրկորովի համար, այնտեղ արգելել են ոչ միայն նրա մուտքը, այլեւ ձայնարիզների վաճառքը լոկ այն պատճառով, որ նրան ազգությամբ հայ են համարում:

Հիմա էլ Հայաստանում են բողոքի ցույցեր անում Կիրկորովի այցելության դեմ: Այնպես որ, ընդունի թե չընդունի իր արտասները, այս հարցում Ֆիլիպը հայի բախտ ունի:

Ի դեպ, համերգներին դեռ 10 օր կա, բայց տոմսերի 25-30 տոկոսն արդեն վաճառվել է:

Ինչ էլ լինի, Կիրկորովի այցը, երեւում է, առաջիկա օրերի ամենակարեւոր իրադարձությունն է դառնում նաեւ քաղաքապետարանի աջակցությամբ:

Կ. Դ.

ԴԱՐՅԻ ԵԿԱՄԸ

Սոցիմնադրամի նախագահը սոցքարտերը համեմատում է ամոլ գազի հետ

«Ես, որպես Հայաստանի Հանրապետության քաղաքացի սոցքարտերի անհրաժեշտությունը չեմ տեսնում», երեկ հրավիրած մամուլի ասուլիսին, պատասխանելով **«Ազգի»** հարցին, թե ինչ իմաստ ուներ սոցիալական քարտեր պարտադրել բնակչությանն այն դեպքում, երբ դրանց առկայությամբ շարունակվում է թոշակառուներից եւ նպաստառուներից զանազան տեղեկանքներ պահանջելը, այսպիսի անսպասելի պատասխան տվեց սոցիալական պետական հիմնադրամի նախագահ **Վազգեն Խաչիկյանը:** Նշելով, որ քարտերի ներդրման քաղաքականությունը մշակել եւ իրականացրել է այլ կառույց, նա ավելացրեց, որ սոցքարտերի այն համակարգը, որ ներդրվել է Հայաստանում, իր համար անհասկանալի է եւ այստեղ անհրաժեշտ է լուրջ քննարկումներ կատարել: Համեմատելով սոցքարտերի համակարգը ամոլ գազի հետ, որը հոտ չունի եւ առերեւույթ ոչինչ զգացնել չի տալիս, բայց կործանարար հետեւանքներ է ունենում, Վազգեն Խաչիկյանն առաջարկեց կես ճանապարհին հետ կանգնել, եթե այդ քարտերը սխալ են կիրառվում: Սոցիմնադրամի նախագահի հավաստմամբ, ժամանակին կողմ լինելով սոցքարտերին, իր պատկերացմամբ, դրանք պետք է լինեին սոցիալական աջակցության քարտեր: Այնպիսիք, ինչպիսիք գործում են, օրինակ, Գերմանիայում եւ Ֆրանսիայում:

Չնայած մամուլի ասուլիս հրավիրելու նպատակը սոցիմնադրամի նախագահի՝ Ռուսաստանի Դաշնություն նրա կատարած այցն ու ռուսաստանցի իր գործընկերների հետ քննարկված հարցերի մասին տեղեկություն տրամադրելն էր, լրագրողների հարցերն առավելապես առնչվում էին թոշակների, սոցվճարների, հիմնադրամի միջոցների կառավարման եւ համանման այլ խնդիրներին:

Վազգեն Խաչիկյանը հայտնեց, որ Հայաստանում սոցքարտեր չստացած մոտ 11 հազար քաղաքացիներ կան, որոնց թոշակներ չեն վճարվել: Դրանց մի մասը նախկին խորհրդային անձնագիր ունեցողներն են, մյուսներն ունեն նոր անձնագրեր, բայց քարտեր չեն ստացել, իսկ երրորդներն էլ հրաժարվում են ստանալ դրանք: Սակայն Վազգեն Խաչիկյանն այն կարծիքի է, որ կենսաթոշակ ստանալու իրավունքն ամրագրված է սահմանադրությամբ եւ միայն սահմանադրությամբ էլ կարող է սահմանափակվել: «Եթե զինվորական ծառայության համար այլընտրանք է նախատեսվում, ապա ինչո՞ւ նման այլընտրանք չի կարելի նախատեսել սոցքարտերից հրաժարվողների համար», ավելացրեց սոցիմնադրամի նախագահը:

Թոշակների վերաբերյալ տեղեկացվեց նաեւ, որ դրանց լուրջ ուշացման դեպքեր չկան: Ներկայումս վճարվել են հունվար-փետրվար ամիսների թոշակները: Պատշաճորեն նշանակվելուն հաջորդած օրերին հիմնադրամի նախագահի առաջին քայլերից մեկը եղել է ծախսերի նվազեցման միջոցառումների իրականացումը: Ներկայումս ընթանում են կենսաթոշակառուների ցանկի ճշման աշխատանքները, ինչպես նաեւ ավելորդ հաստիքներ են կրճատվում հիմնադրամի տարածքային կենտրոններում: Ինչ վերաբերում է սոցվճարների հավաքման գործընթացը հարկային մարմիններին հանձնելուն, ապա Վազգեն Խաչիկյանը դա դրական է գնահատում, ներկայացնելով գումարների հավաքման այն ցուցանիշները, որ արձանագրվել են այս տարվա հունվար-մարտին: Համաձայն դրանց, այս տարվա հունվար-փետրվարին հավաքվել է 7,8 մլրդ դրամ, անցյալ տարվա նույն ժամանակահատվածի 5,8 մլրդ դրամի դիմաց: Այս տարվա մարտի 25-ի դրությամբ հավաքվել է 3,8 մլրդ դրամ: Բացի հավաքված գումարից, հիմնադրամն ունի պահուստներ, ինչի շնորհիվ վճարվում է մոտ 4 մլրդ դրամ կազմող թոշակները: Մարտի 1-ից կենսաթոշակների բազային չափը 3 հազար դրամից 4 հազար դրամ դառնալու դեպքում, հիմնադրամը դեռ հնարավորություն կունենա կատարելու այդ վճարումները:

Վազգեն Խաչիկյանը անդրադարձավ նաեւ եկամտահարկի բազային, նշելով, որ այստեղ մուտքերը դանդաղ են աճում եւ Հայաստանի ցուցանիշները զիջում են մեր երկրի զարգացման մակարդակին գտնվող համանման երկրների ցուցանիշներին: Չնայած բիզնեսը զարգանում է, աշխատատեղերը շատանում, բայց դրանից եկամտահարկի բազան չի ավելանում: Հիմնադրամի նախագահի համոզմամբ, քաղաքացիները նույնպես պետք է շահագրգռված լինեն իրենց աշխատավարձերի իրական չափը ցույց տալու մեջ: Թաքնված զբաղվածությունը կարելի է բերել հարկման դաշտ, բայց աշխատավարձերի իրական չափը բացահայտելն առանց քաղաքացիների մասնակցության անհնար կլինի: Ասվածի ապացույցն են առկա տվյալները, համաձայն որոնց 434 հազար աշխատողներից 152 հազարը, այսինքն յուրաքանչյուր երրորդը ցույց է տվել, որ ինքը ստանում է 20 հազար դրամ աշխատավարձ: Այդ գումարն այն չափն է, որից վճարվում է նվազագույն սոցվճար: Սակայն հիմնադրամը դեռեւս չի դարձել սոցիալական ապահովագրական կամ կուտակային կառույց, ինչը կխթաներ քաղաքացիներին վճարումներ կատարել իրենց հաշվին թոշակային տարիքի ժամանակ ավելի մեծ գումարներ ունենալու նպատակով: Ներկայումս օրենսդրական հիմք դրա համար չկա, բայց Վազգեն Խաչիկյանի կարծիքով, հնարավոր է 2006 թ. անցում կատարել վերոնշյալ համակարգերին:

Ինչպե՞ս եւ ո՞ր բանկում են կառավարվում հիմնադրամի գումարները՝ Վազգեն Խաչիկյանը պատասխանեց, որ դրանք ներկայումս տեղաբաշխված են «Հայինվեստբանկում»: Սակայն մրցույթ է հայտարարվել այդ գումարը 3 բանկերի կողմից սպասարկելու համար, որին արձագանքել են 4 բանկեր: Հիմնադրամի նախագահի կարծիքով, մրցույթը հաղթող է անցկացվել, որին անհրաժեշտ հրապարակայնության դեպքում շատ ավելի մեծ թվով բանկեր ցանկություն կունենային մասնակցել: Նշելով, որ նոր նշանակված ժամանակ ինքը չի մասնակցել այդ գործընթացին, նա հնարավոր համարեց նոր մրցույթի անցկացումը:

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Տոնական թալան

1-ին էջից

Հոգեւոր ճանապարհին գտնվող եւ այդ սկզբունքներով իրապես ապրողի համար տոներն ու եկեղեցական արարողություններն արտաքին, ձեւական բնույթ ունեն: Բայց քրիստոնյա մարդու համար Սբ. Հարության տոնը բացառիկ կարեւորություն ունի: Սակայն որեւէ երեւույթի կամ տոնի հավատական ընկալման ու վերաբերմունքի ժամանակներն անցել են ասես: Այսօրվա ժամանակը փորձաքար է կարծես, եւ որեւէ ընդհանուր գաղափարախոսության բացակայությունն ընտրության անհասական իրավունքը բացարձակացման է հասցրել: Մարդկային վարք ու բարքը վերահսկողության, առավել եւս ինքնահսկողության չի ենթարկվում:

Հատկապես տոների (եկեղեցական թե աշխարհիկ) նկատմամբ առեւտրական զանգվածն իր ուրույն մոտեցումներն ունի՝ այդ մեկ օրվա սահմաններում առավելագույն շահ ստանալու ակնկալիքով, խիղճն ու բարոյականությունը կշռաչափի ամենացածր սանդղակից չեն բարձրանում: Զատկի, հատկապես նախորդ օրը շուկայում հայտնվածները լավ կհասկանան գլխաքանդիչ այն զգացողությունը, որն այդ օրը պատճառեց առեւտրական գեշ հոգեբանությամբ ձեւավորված մթերային «գնահատակարգը»:

Ամեն քայլափոխի կարելի էր հանդիպել աշակերտական տետրակի թղթերի մեջ փաթաթված ներկ վաճառող կանանց, որոնք, իհարկե, զգուշավորներին վստահեցնում էին ներկի բաղադրության անվտանգության մեջ՝ բանավոր երաշխիքներով, իհարկե: Նրանցից մեկն ամենից շատ էր շահում վստահությունը, որովհետեւ ներկերի վրա փակցրել էր «Grand Candy» անվանագրությունը (իբր ներկն այդ ֆիրմայից է): Սակայն երբ տվյալ կազմակերպության 2 ներկայացուցիչներ սկսեցին հարց ու փորձ անել, վաճառողուհին կցկտուր պատասխաններ սկսեց տալ ու շփոթվեց, որովհետեւ նա այդպիսի իրավունք պարզապես չուներ: Երիտասարդների այն հարցին, թե թունավորման դեպքեր եթե լինեն, ինքը պատասխանատու է: Կինը, թե՝ այո, երաշխավորում եմ: Իսկ երաշխավորո՞ւմ էր արդյոք ֆիրմայի անվան չարաշահումը: Երիտասարդների հեռանալուն պես նա արագորեն դեն նետեց ներկերի վրայի «Grand Candy» գրությունը:

Ջնջավաճառներն ու կանաչեղեն վաճառողներն այդ օրը տարերի մեջ էին, բայց Մերգելյանի դիմացի բացօթյա շուկայում մեկն ուղղակի ինքն իրեն գերազանցեց. ամեն անգամ մի գին էր ասում՝ 500-400-350 դրամ, ում ինչպես կարող է խաբել, խաբում էր... «Ինչո՞ւ է այսքան թանկ կանաչին»: «Զատիկ է, բա ի՞նչ ես ուզում»: «Փոխարենը հակառակը լինի, որ մարդիկ գոնե այս սուրբ օրն իրենց լավ զգան, տոնի հաշվին կողոպո՞ւտ եք սարքել»: Կանաչեղենի հսկայական «դեզի» հաստաբետս, լայնաթիկունք, լայնադեմ կինն աչքերը փակեց ու բերանը բաց արեց. «Լոլո՛ չկարդաք գլխիս, դուք՝ էդ հավատացյալներդ, խելքներդ թոքրաձներ եք, դուրս եք տալիս: Մեկդ տեսե՞լ է, որ խոսում եք», եւ շարունակեց թղթին հանձնելու անարժան բառապաշար շաղ տալ փողոցով մեկ:

Կորացած մեջքով մի ծեր կին՝ կոկիկ հագնված ու շրարված, աչքերը զարմանքից լայն բացած շրջվեց՝ ինքն իրեն խոսելով. «Այս ինչե՞ր է ասում, ինչպե՞ս է համարձակվում: Աստուց չի՞ վախենում, ա՛յ թեզ քրիստոնյա ժողովուրդ, այս ի՞նչ թալան է, պատկերացնում եք, չկարողացա անգամ մեկ կապ թարխուն գնել»:

Կանաչեղենի ողջ դեզը վաճառվե՞ց, թե՞ ոչ, ինչ իմանանք, բայց հատատապես դժվար կլինի այսպիսիներին հասկացնել ոչ թե երկնքում գանձեր կուտակելու, այլ անգամ երկրի վրայի ցեղ ու ուսիճների մասին, եթե գիտեն անգամ ողջ կանաչին գրսահարված լիներ...

Մեզանում խմբեր կան, որ քրիստոնեական պետություն հռչակելու գաղափարներ են արտահայտում, բայց մեզ, կարծում եմ, ավելի շուտ հոգեւոր դարձ է պետք անել՝ քրիստոնեությունը վերստին ընդունելու...

Մարտի 18-20-ը Անկարայում հավիրվեց «Կովկասյան բարեկամության օրերի հաշտության» կոնֆերանսը: Դա ՄԱԿ-ում ռոթարիական ակումբների ներկայացուցչության աջակցությամբ կազմակերպել էր միջազգային «Ռոթարիի» տարածաշրջանային ակումբների ղեկավարությունը: Կոնֆերանսին հավիրվել էին Երեւանի, Գյումրու, Բաքվի եւ Թբիլիսիի ակումբների պատվիրակությունները, ինչպես նաեւ օտարերկրյա հյուրեր, որոնց թվում էին ԱՄՆ-ից Կարոիս Տեր-Եղիայանը եւ Ֆրանսիայից Սամսոն Օզարարաը:

«Կովկասյան հաշտության կոնֆերանս» Անկարայում

Հայերի նկատմամբ կազմակերպիչների ընդգծված սիրալիրությունը դրան հաղորդեց հայ-թուրքականի բնույթ

Եթե հաշվի առնենք, որ մեր հայրենակիցները Երեւանի ռոթարիական ակումբի նախագահ Հովսեփ Սեֆերյանի եւ Գյումրու ռոթարիական ակումբի նախագահ Տիգրան Բեգլարյանի հետ ոչ միայն հանդես եկան զեկուցումներով, այլեւ ընդգրկված լինելով աշխատանքային առաջին եւ երկրորդ խմբերում, նաեւ առանձին ելույթներով մասնակցեցին բանավեճերին, արդյունքում ակնհայտ կդառնա կովկասյան հաշտության կոնֆերանսի վերածումը, փաստորեն, հայ-թուրքական կոնֆերանսի:

Կոնֆերանսը բարձր մակարդակով էր կազմակերպվել: Դա անթերի էր ինչպես կազմակերպման, այնպես էլ հայ մասնակիցների նկատմամբ տրամադրվածությունն ընդգծելու առումով, որը միանգամայն դրական էր անդրադառնում Հայաստանի նկատմամբ կոնֆերանսի կազմակերպիչների տրամադրվածության վրա: Այս տրամադրվածությունը, կարծում ենք, լավագույնս արտահայտեց կոնֆերանսի հայկական մեդեդիների հնչյունների ուղեկցությամբ կատարվող տպավորիչ բացումը:

Մինչ կոնֆերանսի աշխատանքներին անդրադառնալը նշենք, որ դա առիթ ծառայեց Երեւանի եւ Գյումրու ակումբների անդամներին, որպեսզի նրանք հայկական հինավուրց եկեղեցիներն այցելելու եւ Կարադաղկիայի պատմամշակութային արժեքներին ծանոթանալու համար Անկարա ուղեւորվեն Կարս-Իգդիր-Վան-Տաշիվան-Մալաթիա-Նեւշեհիր-Կեսարիա երթուղով:

Ցիաշված Կեսարիայի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, անմխիթար վիճակում էին Կարսի Առաքելոց եւ Աղթամար կղզու Սուրբ Խաչ եկեղեցիները: Առաքելոց եկեղեցու ցուցատախտակին գրված էր՝ «Գմբեթավոր մզկիթ, կառուցված 934-936 թթ., բացումը կատարվել է 1998 թ.», իսկ Աղթամարի Սուրբ Խաչի զարդաքանդակներն այլանդակված էին կամ էլ ամբողջությամբ տաշված, էլ չենք խոսում որմնանկարների եւ խորանի մասին: Թերեւ պատահական չէր, Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցին եւ Անիի մայր տաճարը ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանու ներքո վերականգնելու Կարոիս Տեր-Եղիայանի առաջարկը կոնֆերանսի մասնակիցներին, որն արժանացավ դրական արձագանքի:

Այնուամենայնիվ, Երեւանի եւ Գյումրու պատվիրակությունները յուրաքանչյուր հաղորդում արժանանում էին ջերմ ընդունելության: Ավելին՝ նրանց հետ հանդիպելու համար Դիարբեքիրից Տաշիվան ժամանեց «Ռոթարի» ակումբի նախագահ Սելահաթդին Գյոնուլի գլխավորած խումբը: Ավելի քան ջերմ էր ընդունելությունն Անկարայում: Հարկ է, սակայն, նշել, որ փաստացի հայ-թուրքականի վերածված կովկասյան հաշտության կոնֆերանսի դարագայում կարեւորը սոսկ ընդունելության ջերմությունը չէր, այլ թուրք ռոթարիականների տնտեսական կարողությունները եւ երկրի քաղաքական շրջանակների վրա նրանց անժխտելի ազդեցությունը: Այս հանգամանքն առանձնակի նշանակություն էր հաղորդում կոնֆերանսին եւ ընդգծում դրա կարեւորությունը հայ-թուրքական հարաբերությունների հետագա ընթացքի համար:

Կոնֆերանսը հակիրճ, բայց բովանդակալից ելույթով բացեց ռոթարիականների տարածաշրջանային ակումբների գլուխները նստած Ցիֆթչիօղլուն: Նա ընդգծեց փոքր քայլերով մեծ առաջընթաց կատարելու կարեւորությունը, Կովկասը համեմատեց բազմաթիվ երկրագուներ ունեցող «սարի աղջկա» հետ, մատնանշեց Կովկասը միասնական տեսնելու մեծ տերությունների ցանկությունը եւ ավելացրեց. «Ինչ խոսք, մենք չենք կարող լուծել տարիների վաղեմություն ունեցող խնդիրները, սակայն միանգամայն ի վիճակի ենք նպաստել դրանց լուծմանը: Կովկասում բարեկամության նշանակությունն այնքան մեծ է, որ չի կարելի դա թողնել սոսկ քաղաքական գործիչների հայեցողությանը»:

Ցիֆթչիօղլուն ելույթում միաժամանակ հորդորեց մասնակիցներին՝ ասելով. «Կոնֆերանսի նպատակը Կովկասում առկա խնդիրների պատճառները մատնացույց անելը չէ, այլ դրանց հաղթահարման ուղիների որոնումը»: Նրա օրինակին, Թուրք-հայ գործարար միության նախագահ Քաան Սոյմի գլխավորությամբ, հետեւեցին մյուս զեկուցողները, մեր հայրենակիցները ներառյալ: Այսպիսով դահլիճում ստեղծվեց բարեկամական մթնոլորտ:

Այս պայմաններում Բաքվի ռոթարիական ակումբի նախագահ Ալի Մուսաեւը հրաժարվեց գրավոր զեկույցից, որի տեքստը նախապես ներկայացրել էր կոնֆերանսի կազմակերպիչներին, եւ դա ընթերցելու փոխարեն նախընտրեց հրաժարվելու մասին հայտարարել՝ պատճառաբանելով, թե ընդառաջում է դահլիճի ցանկություններին: Սա նշանակում է, որ կոնֆերանսի կազմակերպիչները հայերի նկատմամբ իրենց տրամադրվածությամբ դահլիճում հաշտ ու խաղաղ մթնոլորտ ստեղծելիս միաժամանակ հոգ էին տարել, որ այդ մթնոլորտը հանկարծ չմթագնի:

Ստեղծված իրավիճակում միանգամայն տրամաբանական է, որ դահլիճի համար կարեւոր թեմա է լիներ ոչ այնքան Մուսաեւի ելույթի բովանդակությունը, որքան մթնոլորտը չխաթարելու նրա պատասխանատվությունը: Հակառակ դրան Սեֆերյանը եւ Բեգլարյանը լավ տպավորություն գործեցին իրենց զեկուցումներով: Վերջում կոնֆերանսն ընդունեց Կովկասում երկխոսության, էթիկայի բարձր արժեքների, տարածաշրջանային փոխըմբռնման եւ հաշտության մթնոլորտում խաղաղ գոյակցության կարեւորությունն ընդգծող հռչակագիրը, որն իբրեւ փակման խոսք մասնակիցներին ներկայացրեց Էրհան Ցիֆթչիօղլուն:

Ինչո՞վ է պայմանավորված «Կովկասյան բարեկամության օրերի հաշտության» կոնֆերանսի հավիրումն Անկարայում: Հարցին կոնֆերանսի արդյունքները գնահատելիս անուղղակիորեն պատասխանում է դրա անմիջական կազմակերպիչներից Քաան Սոյմը: Նրա գնահատականները հրապարակվել են «Միլիեթի» մարտի 21-ի համարում: Սոյմը կարծիք է հայտնում, որ Կովկասում տիրող իրավիճակը նեղն է գցել հայ եւ ադրբեջանցի գործարարներին, նրանք, ձանձրացած այս իրավիճակից, սկսել են ուղիներ որոնել, դա պետք է օրինակելի լինի Անկարայի համար, եւ Թուրքիան պիտի հրաժարվի Հայաստանի նկատմամբ իր քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղի հիմնահարցով պայմանավորելուց:

Ավելին՝ Սոյմը հարցադրում է անում. «Թուրքիան 12 տարի շարունակ Հայաստանի առջեւ փակել է իր սահմանները: Դա ինչ արդյունք տվեց, որեւէ կերպ նպաստե՞լ է ղարաբաղյան հարցի կարգավորմանը», եւ պատասխանում է՝ ո՛չ: «Միլիեթը» գրում է, որ Սոյմի տեսակետին են նաեւ Անկարայում որոշ պետական գործիչներ, այլապես նրանք չէին արտահայտվի Հայաստանի նկատմամբ Ադրբեջանից անկախ քաղաքականություն մշակելու անհրաժեշտության մասին:

Քաան Սոյմի գնահատականներն ու «Միլիեթի» վերոհիշյալ հետեւությունը հիմք են տալիս ենթադրելու, որ Թուրքիայի հայկական քաղաքականության սպառումը փաստի առջեւ է կանգնեցրել թուրքական իշխանություններին: Դրա վերանայումը հրամայական է դառնում վերջիններիս համար: Քանի որ վերանայման նախապայմանը որդեգրած դիրքորոշումից նահանջելն է, իսկ նահանջելու դեպքում անհնար է խուսափել երկրի քաղաքական շրջանակների հակազդեցությունից, ուստի իշխանությունների համար առաջնահերթ նշանակություն է ձեռք բերում վերանայման նախադրյալների ստեղծումը: Դա պայմանավորվում է երկրում բարենպաստ հասարակական կարծիքի ձեւավորմամբ: Այս պայմաններում իշխանությունների տեսադաշտում են հայտնվում ոչ պետական կառույցները:

Այլ կերպ՝ Թուրքիայի հայկական քաղաքականությունն առանց հակազդեցության վերանայելու համար իշխանությունները վերանայման նախադրյալների ստեղծման նախաձեռնությունն ինքնակամ զիջում են ոչ պետական կառույցներին: Վերջիններս քաղաքացիական նախաձեռնությամբ արձագանքում են դրան: Այսպիսով, կազմակերպվում է կովկասյան հաշտության կոնֆերանսը, որն էլ իբրեւ քաղաքացիական նախաձեռնության դրսեւորում դառնում է եւ Թուրքիայի հայկական քաղաքականության վերանայման համար նախադրյալների ստեղծման, եւ երկրում համապատասխան հասարակական կարծիքի ձեւավորման արդյունավետ միջոց:

Քաղաքացիական այս նախաձեռնությունն, ինչ խոսք, ողջունելի է, միայն թե Երեւանի եւ Գյումրու պատվիրակությունների նկատմամբ կոնֆերանսի կազմակերպիչների սիրալիրությունը պահանջի տեսքով չանդրադառնա Հայաստանի վրա: Ի վերջո ամեն ինչ գին ունի, սիրալիրությունն՝ առավել եւս: Հատկապես այն դեպքում, երբ դա համադրվում է Հայաստանի նկատմամբ տրամադրվածությամբ եւ հատուկ ընդգծվում:

ՀԱԿՈԲ ՉԱԼԲՅԱՆ
Անկարա-Երեւան

Վիրավորված եմ պատգամավորի աններելի անտեղյակությունից

Մարտի 22-ին ՀՀ Ազգային ժողովում պատգամավոր Հրանուշ Հակոբյանն իր ելույթում ասաց, որ բավական է ողբալ՝ վերհիշելով ցեղասպանությունը, եւ հորդորեց զերծ մնալ ու չօգտագործել մեծ ցեղասպանության հատկապես «մեծ» բառը, քանզի մեծը մեր լեզվով միայն լավ բան է բնորոշում:

Վիրավորական է մեր միլիոնավոր զոհերի 90-ամյակի տարում, մանավանդ ներկա պայմաններում նման արտահայտություն լսել ժողովրդի ընտրյալ պատգամավորի շուրթերից:

Տավալի է, որ պատմագիտության դոկտորի դիտարը տեղյակ չէ մեր պատմության ողբերգական իրադարձությունների դասագրքային դրվագներին:

Վերջին հարյուրամյակին հայ ժողովուրդն ունեցել է մի շարք ողբերգական էջեր, որոնցից առաջին երեքն իրականացվել է Օսմանյան կայսրության տարածքում: Ըստ այդմ՝ առաջինը 1895-1896 թթ. սուլթան Համիդ Երկրորդի ծրագրած ու համիդիե քրդական զորաջոկատների միջոցով իրագործված ջարդերն են, որոնց զոհ գնացին մոտ 350 հազար հայեր, իսկ 1908 թ. երիտթուրքերի կազմակերպած ջարդերը խլեցին 80-100 հազար կյանք: Այնինչ թուրքերի հայաջինջ քաղաքականության երրորդ դրսեւորումը 1915-18 թթ. խլեց մեր անմեղ հայրենակիցների 1,5 միլիոնի կյանքը: Վերջինս կոչվեց ցեղասպանություն եւ պատմագիտության մեջ, ի տարբերություն նախորդ ավելի փոքր (մեղա, մի՞թե 350 կամ 80-100 հազարները փոքր թվեր են մեր մի բուռ ժողովրդի համար) կոտորածների՝ իր աննախադեպ մասշտաբներով, իրավամբ կոչվեց Մեծ եղեռն կամ, ըստ Ռաֆայել Լեմկինի, գենոցիդ (ցեղասպանություն):

Հարգելի տկն Հրանուշ, դուք կոչ եք անում ձեռնպահ մնալ 1915 թ. հայոց եղեռնը մեծ անվանելուց, իսկ ես կոչ եմ անում զերծ մնալ պատմագիտական շեղումներից՝ դա թողնելով մասնագետներին:

ԱՐԹՈՒՐ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

ԹՈՒՐՔԱԳԻՏԱԿԱՆ ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄ

Անհանդուրժողականության ծայրահեղությունը

Ոնչգությունները անգամ գիտական աշխարհում հաստատված անվանումների հանդեպ

Օտարին մնացած մեր պատմական հայրենիքի հայկականության դրոշմը վերացնելու կամ յուրացնելու թուրքական ջանքերը չեն սահմանափակվում միայն մշակութային արժեքներով, այդ մոլուցքն ուղղված է նաեւ գիտական ասպարեզում վաղուց հաստատված նույնիսկ կենդանական եւ բուսական աշխարհի ներկայացուցիչների հայկական ծագմանն ու նրանց անվանումներին:

Տակավին վերջերս BBC-ն տեղեկացրեց թուրքական իշխանությունների՝ այն կենդանիների, որոնցում որեւէ կերպ հիշատակվում են հայերը կամ քրդերը, անուններում փոփոխություն մտցնելու որոշման մասին: Վայրի ոչխարը, որ նախկինում հնչել էր «Ovis Armeniana», այսուհետեւ հնչելու է «Ovis Orientalis Anatolicus», «Capreolus, Capreolus Armenus» անունով պախրան՝ «Capreolus Cuprelus Capreolus», կարմիր աղվեսը, որ կոչվել էր «Vulpes Kurdistanica», վերանվանվել է «Vulpes Vulpes»:

Քաղաքական ենթատեքստով այս փոփոխությունները միտված են ժխտելու վավերական այն փաստերը, որ այդ տարածքները բնակեցվել են հայերով ու քրդերով, որոնք էլ համապատասխանաբար անվանակոչել են այդ կենդանիներին:

Գիտական աշխարհի նկատմամբ թուրքերի կամայական այս ոտնձգությունները նորություն չեն: Դեռեւս 1972 թ. Լենինգրադում (այժմ Պետերբուրգ) կայացած Բուսաբանական 12-րդ կոնգրեսում թուրք գիտնականները ցանկացել են փոխել ծիրանի լատինական վաղուց ընդունված անվանումը սելջուկյան ինչ-որ անվանմամբ: Սակայն կոնգրեսի մասնակից գիտնականներից հակահարված են ստացել եւ առաջարկը մերժվել է:

Այս հարցի շուրջը զրուցելիս, մեզ տեղեկացրեց կենսաբանական գիտ. դոկտ., պրոֆեսոր Լեւոն Հարությունյանը. «Գոյություն ունեն մի շարք լատիներեն անվանումներ, որոնք պատմական երկրների կամ զանազան այլ անուններով են կոչվում: Կան նույնիսկ բույսեր ու կենդանիներ, որոնք կոչվում են ներկայումս գոյություն չունեցող պետությունների անուններով, ինչպես՝ պոնտական, տավրյան, ասորական, բաբելոնյան, բյուզանդական, միջագետքյան, եւ մոտավորապես 80-100 անուն զուտ հայկական («Արմենիակա», «Արմենա»):

Հայկական ծիրանի «Արմենիակա» անվանումը հնագույն ծագում ունի: Դեռեւս մ.թ.ա. 1-ին դարում հռոմեական Լուկուլլոս զորավարը, երբ պատերազմում էր հայոց արքա Տիգրան Մեծի դեմ, Հայաստանից Հռոմ է տանում ծիրանենու տնկիներ, որոնք մշակվեցին այնտեղ եւ անվանվեցին «Հայկական սալոր»: 18-րդ դարի խոշորագույն բուսաբան Ժան Բաշիուս Լամարկը նկատեց, որ դա ոչ թե սալոր է, այլ նոր ցեղի ներկայացուցիչ, եւ անվանեց Armeniaca Vulgaris: Այդ անունը գոյություն ունի միչեւ այսօր, եւ չնայած «թուրք գիտնականները» բազմիցս փորձել են փոխել այդ անվանումը, գիտական հասարակությունը մշտապես արհամարհանքով մերժել է նրանց առաջարկը:

Այդ անունները փոփոխման ենթակա չեն, դրանք հավերժացել են պատմական փաստաթղթերում, հանրագիտարաններում, զանազան գիտնականների կոթողային աշխատություններում, դասագրքերում:

Այս քայլին թուրքերին մղում է այն սարսափը, որը նրանց հետապնդում է Բյուզանդիան, Փոքր Ասիան, Հայաստանը նվաճելուց հետո: Իրենք այս տարածաշրջանում զուրկ լինելով պատմական որեւիցե արժեքներից, չեն կարողանում հանդուրժել այդպիսիք ունեցող հնագույն, ճանաչված ժողովուրդներին, եւ, իհարկե, առաջին հերթին հայերին»:

Այո՛, յուրօրինակ հարեւանության է մեզ դատապարտել ճակատագիրը:

ՄԵԼՈՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

«Եթե թուրքերը ցեղասպանությունը ճանաչեն, միեւնույն է, հայերը չեն հրաժարվի պահանջատիրությունից»

Որքան մոտենում է Մեծ եղեռնի 90-րդ տարելիցը, այնքան մեծանում են թուրքական քաղաքական շրջանակների մտավախությունները: Թեեւ դրանք պայմանավորված են Հայոց ցեղասպանության ժխտողականության դիրքերի սպառումով, բայց եւ այնպես այս շրջանակները շարունակում են սպառված դիրքերից հակափայլեր ձեռնարկել, ընդ որում՝ վարձու գիտնականների ներգրավումով: Այդ գիտնականների մեջ առանձնակի դեր ունի ամերիկացի Զասթին Մկֆարսին, որը մարտի 24-ին Թուրքիայի ազգային մեծ ժողովի՝ Մեջլիսի հատուկ նիստում հանդես է եկել «Ճշմարտությունը հայկական հարցում» թեմայով դասախոսությամբ:

Միջոցառմանը ներկա են եղել Մեջլիսի նախագահ Բյուլենթ Արընչը, Ժողովրդա-հանրապետական կուսակցության նախագահ Դենիզ Բայքալը, արտգործնախարար Աբդուլլահ Գյուլը, արդարադատության նախարար Զեմիլ Չիչեքը, բազմաթիվ պատգամավորներ, ինչպես նաեւ բարձրաստիճան զինվորականներն ու օտարերկրյա դեսպանատների ներկայացուցիչները:

Հատուկ նիստը բացել է Բայքալը՝ ասելով. «Եթե Հայաստանը համոզված է, որ ցեղասպանության փաստարկները ճշմարտացի են, ապա չպետք է մերժի երկու երկրների պատմաբաններից անկախ հանձնաժողով ստեղծելու առաջարկը: Հայաստանի ղեկավարությունը Թուրքիայի այս առաջարկը գնահատելիս պետք է նկատի ունենա, որ սա իրականում հաշտության նախաձեռնություն է»: Նրան է հետեւել Արընչի ելույթը. «Մենք պետք է լրջորեն շարունակենք պայքարը ցեղասպանության պնդումների դեմ: Թուրք ազգը պատմության ընթացքում ոչ մի ցեղասպանություն չի իրագործել»:

Ինչ վերաբերում է Մկֆարսիին, ապա նա, թուրքական հանրային հեռուստատեսության վկայությամբ, բառացի նշել է. «Օսմանցիները չափազանց խելացի մարդիկ էին: Եթե ցանկանային, ապա Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում կբնաջնջեին բոլոր հայերին: Հայերն Իզմիրում, Էդիրնեում եւ երկրի արեւմուտքում տեղահանության չեն ենթարկվել: Ենթարկվածների 80 տոկոսը ողջ է մնացել: Մի՞թե այդպես կլիներ, եթե ցեղասպանություն իրագործվեր: Թուրքերը իբր հայերին պատկանող հողեր են ներթափանցել դեռեւ 1071-ին: Հայկական վարկածով ցեղասպանությունը 1915-ին է կատարվել: Եթե թուրքերը հայերին կոտորելու հակում ունեին եւ լինեին մոլագար ժողովուրդ, հավանաբար 900 տարի չէին սպասի: Պատմության փորձը ցույց է տալիս, որ եթե թուրքերը նույնիսկ ճանաչեն ցեղասպանությունը, դրա համար ներողություն խնդրեն եւ փոխհատուցում վճարեն, միեւնույն է, հայերը չեն շեղվելու իրենց նպատակից: Նրանք, միեւնույն է, մտածելու են էրզրումը, Վանը, Էլազիգը, Բիթլիսը եւ Տրապիզոնը Հայաստանին հանձնելու անհրաժեշտության մասին: Այս դեպքում ընդլայնված Հայաստանի բնակչությունը սահմանափակվելու է հայերի 1/4-ով: Կարո՞ղ է գոյատեւել այսպիսի պետություն: Կարող է, բայց թուրք բնակիչների արտախսման դեպքում միայն: Սա էր հայերի նպատակը 1915-ին, այսօր էլ այդպես է եւ այդպիսին կլինի առաջայում: Դարերի ընթացքում նրանք Արեւելյան Անատոլիայում մեծամասնություն չեն կազմել: Ունեն 100-ամյա գաղափարախոսություն, որը 2005-ին այն է, ինչ 1915-ին էր: Թուրքերը տեղի չեն տալու»:

Վերջում Մկֆարսին, ակնարկելով Թուրքիայից Հայոց ցեղասպանությունը ճանաչելու Եվրամիության պահանջը, ավելացրել է. «Մի՞թե կարելի է անդամակցել մի կազմակերպության, որը թուրքերի նախնիներին մարդասպան է համարում: Ես գիտեմ, որ ԵՄ-ը կմերժի հայ ազգայնամոլների պահանջը: Այնուամենայնիվ, հավատում եմ, որ անկախ ԵՄ-ի մեղադրանքների բնույթից, թուրքերն արժանապատիվ մարդիկ են: Հազիվ թե ԵՄ-ը զրպարտի նրանց»:

Հ. Ղ.

Պապի փոխարեն հավատացյալներին օրհնել է կարդինալ Սոդանոն

Կաթոլիկ եկեղեցու հովվապետ եղած ժամանակաշրջանում առաջին անգամ Հռոմի Հովհաննես-Պողոս Բ պապը Սուրբ Զատկի հանդիսությունների անցկացումը վստահել է իր կարդինալներին: 84-ամյա պապը տառապում է Պարկինսոնի հիվանդությամբ եւ արթրիտի ծանր ձեւով: Նա մարտի 13-ին է դուրս գրվել հիվանդանոցից, որտեղ ընչափողի վիրահատության ենթարկվելուց հետո խոսելու մեծ դժվարություններ ունի:

BBC-ն հաղորդում է, որ Սուրբ Զատկի օրը պապը եղել է շատ թույլ, Վատիկանի պալատի պատուհանից 10 րոպե նայել է հրապարակում հավաքված հավատացյալներին եւ դժվարությամբ մի քանի բառ է արտաբերել:

«Քաղաքին եւ աշխարհին» ուղղված պապական ուղերձն ընթերցել է արքեպիսկոպոս Լեոնարդո Սանդրին: Պապը չի մասնակցել նաեւ կիրակնօրյա պատարագին, որը նրա

փոխարեն անցկացրել եւ ժողովրդին օրհնել է կարդինալ Անջելո Սոդանոն: Վերջինս Վատիկանի պետքարտուղարն է:

Ավելի վաղ՝ շաբաթ օրը, պապը չէր մասնակցել Սբ. Պետրոսի տաճարում անցկացված գիշերային ժամերգությանը: Կաթոլիկ հովվապետին փոխարինել էր նրա մերձավորագույն օգնականներից մեկը՝ կարդինալ Յոզեֆ Ռացինգերը: Պապը տնական արարողություններին հետեւել է հեռուստացույցով:

Սիրիական զորքի 1/3-ը դուրս է բերված Լիբանանից

Սիրիական բանակի հակաօդային պատշտպանության վերջին սնրաբաժանումները կիրակի օրը Լիբանանում թողել են իրենց դիրքերը եւ վերադարձել Սիրիա: Այսպիսով, սիրիացիներն ավարտել են Լիբանանից իրենց զորքերի դուրսբերման երկփուլ գործողության առաջին փուլը: Ռոյթեր գործակալության տվյալներով, արդեն Սիրիա է վերադարձել Լիբանանում տեղաբաշխված 14 հազարանոց սիրիական զորքի 1/3-ը:

Երկու երկրների զինվորական ներկայացուցիչների հանձնախումբն ապրիլի սկզբներին կսահմանի մնացյալ զորքի դուրսբերման վերջնական ժամկետները: ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Կոֆի Անանը հույս է հայտնել, թե դուրսբերումը կավարտվի նախքան մայիսին Լիբանանում կայանալիք ընդհանուր ընտրությունները:

Կոֆի Անանը մտածում է հրաժարականի մասին

ՄԱԿ-ում վերջերս բացահայտված սկանդալային մի շարք պատմությունների պատճառով կազմակերպության գլխավոր քարտուղար Կոֆի Անանը ներկայումս ընկճված է եւ մտածում է հրաժարական տալու մասին: Այս պնդումն է անում Լոնդոնի «Սանդեյ թայմս» թերթը՝ վկայակոչելով գլխավոր քարտուղարի գործընկերներից մեկի հայտնած տեղեկությունները:

Երեքշաբթի օրը պատշտոնական հաշվետվություն է լսվելու ՄԱԿ-ի «Նավթ պարենի դիմաց» իրաքյան ծրագրի շրջանակներում գլխավոր քարտուղարի որդու՝ Կոջո Անանի թույլ տված չարաշահումների վերաբերյալ: Հաշվետվությունը ներկայացնելու է անկախ հանձնաժողովը, որը գլխավորում է ԱՄՆ դաշնային պահուստային համակարգի նախկին նախագահ Փոլ Վոլկերը:

Կոջո Անանը զգալի գումարներ է ստացել ծրագրի շահավետ կարգավորումների մրցույթում հաղթած շվեյցարական «Կոտեկնա» ֆիրմայից: Ամերիկացի քաղաքական գործիչները Կոֆի Անանին հորդորում են հրաժարական տալ, քանզի «Նավթ պարենի դիմաց» ծրագիրն իրականացնելիս նա հաշվի չի առել շահերի բախումը, որը շվեյցարական ընկերության հետ իր որդու գործակցության հետեւանքն է:

«Դեյլի թելեգրաֆ» թերթի տվյալներով, հաշվետվության մեջ խոսվում է նաեւ 1997-99 թթ. «Կոտեկնայի» ներկայացուցիչների հետ Կոֆի Անանի ունեցած երեք հանդիպումների մասին, ինչը նորահայտ փաստ է:

«Թայմսը» գրում է, որ Կոֆի Անանի կողմնակիցներն անգամ կորցրել են վստահությունը նրա հանդեպ: Վերջերս շատ է խոսվում ՄԱԿ-ի վարչական լուրջ խնդիրները լուծելու նրա անկարողության մասին: Մեծ աղմուկ հանած սկանդալներից մեկն էլ վերաբերում է Կոնգոյում ՄԱԿ-ի խաղաղարարների կողմից երեխաների սեռական շահագործմանը:

Որոշ տվյալների համաձայն, հաշվետվությունը գլխավոր քարտուղարին չի մեղադրում «Նավթ պարենի դիմաց» ծրագիրն իրականացնելիս անձնական օգուտ քաղած լինելու մեջ: Այդուհանդերձ, ՄԱԿ-ի փորձագետ, «Հերիթիջ Ֆաունդեյշն» ամերիկյան հետազոտական կենտրոնի աշխատակից Նիլ Գարդիները կարծում է, որ Կոֆի Անանի համար հետզհետե դժվարանում է սեփական դիրքերի պահպանումը: «Մեծ է հավանականությունը, որ նա կամովին հրաժարական տա իր հանդեպ անվստահության խորացման պատճառով», նշում է Գարդիները:

Պ. Բ.

Թուրքիան իր քաղաքացիներին դուրս է բերում Կիրգիզիայից

Մինչ Կիրգիզիան ականատես էր լինում «կակաչագույն» հեղափոխությանը, իսկ հեղափոխությունը դուրս էր գալիս վերահսկողությունից, Թուրքիան սկսեց անհապաղ երկրից դուրս բերել իր քաղաքացիներին: Նախորդ օրը թուրքական ավիաընկերության հատուկ չվերթով ավելի քան 100 թուրքեր Բիշքեկից վերադարձել էին Թուրքիա: Մարտի 27-ին Կիրգիզիայի Օշ եւ Ջալալաբադ քաղաքներից նույն ավիաընկերության ինքնաթիռով Անկարա փոխադրվեցին եւս 123 թուրքեր, որոնց գերակշռող մասը ուսանողներ են եւ դասախոսներ:

Կիրգիզիայում Թուրքիայի դեսպան տիկին Սերփիլ Ալփմանը հայտարարեց, որ երկրում կյանքի անվտանգության առումով որեւէ խնդիր չունեն, իսկ Թուրքիայի արտգործնախարար Աբդուլլահ Գյուլը լրացրեց նրան՝ ասելով. «Թուրքերի նկատմամբ թշնամանք չկա, պարզապես ժողովրդական զանգվածների սոցիալական վիճակն անելանելի է, այդ իսկ պատճառով նրանք դիմում են կողոպուտի»: Այնուամենայնիվ երկրում կողոպուտով ուղեկցվող անկարգությունները շարունակվում են: Ընդ որում, այդ մասին թուրքական հանրային հեռուստատեսության էկրանից անձամբ վկայեց դեսպան Ալփմանը: Ըստ դեսպանի, անկարգությունների պատճառով Կիրգիզիայում հեղափոխության մի քանի օրերին թուրքերը 20 մլն դոլարի կորուստ են կրել, իսկ Բիշքեկում կողոպտվել են Թուրքիայի քաղաքացիներին պատկանող առեւտրի առնվազն 25 օբյեկտներ:

Հ. Ղ.

ԲԻՇՔԵԿ

Հակասություններ Բակիեւի եւ Կուլովի միջեւ

ԵԱՀԿ-ն Կիրգիզիայի ազդեցիկ կլաններին հորդորում է հարցերը լուծել երկխոսության ճանապարհով

Կիրգիզիայի նորընտիր խորհրդարանը, որն ընդդիմությունն ընդամենը մի քանի օր առաջ համարում էր անօրինական, երեկ երկրի վարչապետի պատշտոնում քվեարկությամբ հաստատել է ընդդիմության առաջնորդներից Կուրմանբեկ Բակիեւին: Վերջինս մինչեւ նոր նախագահական ընտրությունները կկատարի նաեւ ժամանակավոր նախագահի պարտականությունները:

Փաստորեն, Բակիեւի վարչապետ նշանակվելով ընդդիմությունն իրավական տեսանկյունից հաստատեց, որ Կիրգիզիայում վերջին օրերին տեղի ունեցածը զինված պետական հեղաշրջում էր: Հիշեցնենք, որ ընդդիմությունն ավելի վաղ իշխանությունը զավթել էր հանրապետության հարավում՝ Օշում, Ջալալաբադում եւ մի քանի այլ շրջաններում, առաջ շարժվել դեպի մայրաքաղաք, գրոհով վերցրել «Սպիտակ տունը»՝ նախագահ Ասկար Ակաեւի եւ կառավարության նստավայրը, իր գործողություններն արդարացնելով, որ փետրվարի 27-ին տեղի ունեցած խորհրդարանական ընտրությունները կեղծվել են:

Իշխանությունը զավթած ընդդիմության թեւերից մեկը՝ երկրի հարավային կլանները ներկայացնող Բակիեւը կողմնակից է Ե՛վ հին, Ե՛վ նոր խորհրդարանների գործունեությանը մինչեւ հուլիսի 26-ը՝ նոր նախագահական ընտրությունների օրը: Մինչդեռ երկրի հյուսիսային կլանները ներկայացնող Ֆելիքս Կուլովը, որն ստանձնել է ուժային կառույցների ղեկավարի պարտավորությունները, պատշտպանում է ԿԸՀ-ի որոշումը, համաձայն որի ԵԱՀԿ-ի, եվրոպական այլ կառույցների, ԱՄՆ-ի կեղծ որակած ընտրությունների արդյունքում ձեւավորված խորհրդարանն օրինական է:

Հինգշաբթի օրը գերագույն դատարանը չեղյալ էր հայտարարել փետրվարյան ընտրությունների արդյունքները, քանի որ, ինչպես ասվում էր դատարանի որոշման մեջ, դրանք իշխանությունները կեղծել էին: Կիրակի օրը, սակայն, ԿԸՀ-ն հաստատեց ընտրությունների արդյունքները, իսկ արդեն երեկ նախորդ գումարման խորհրդարանի ներքին պալատը դադարեցրեց իր լիազորությունները եւ նույնը հորդորեց անել վերին պալատին:

Փաստորեն, վերջին մի քանի օրերին Կիրգիզիայում գործում է երկու խորհրդարան՝ նախկին երկպալատը եւ նոր միապալատը: Կային պատգամավորներ, որոնք Ե՛վ հին, Ե՛վ նոր խորհրդարանի մանդատներ ունեին:

Երկրի օրինական նախագահ Ասկար Ակաեւը, որի լիազորություններն ավարտվում են 2005 աշնանը, ավելի վաղ «Նեզավիսիմայա գազետային» տված հարցազրույցում նախազգուշացրել էր, որ Կիրգիզիայում վրացական եւ ուկրաինական սցենարների ներմուծումը կնշանակի քաղաքացիական պատերազմ եւ երկրի պառակտում:

Ակաեւը ներկայացնում էր Կիրգիզիայի հյուսիսը եւ գահակալության վերջին մի քանի տարիներին կադրային քաղաքականությունը վարում էր ելնելով տեղայնության սկզբունքից: Իշխանության վերնախավում փաստորեն հարավը՝ Ջալալաբադն ու Օշը (Ֆերգանայի հովտի մասն են, որտեղ բնակչության մոտ 50 տոկոսը թյուրիկ ուզբեկներ են) ներկայացված չէր:

Հարավը ներկայացնող Բակիեւն արդեն հայտարարել է նախագահական ընտրություններում իր թեկնածության առաջադրման մասին: Տարիներ շարունակ Կիրգիզիայում Ասկար Ակաեւի հավանական փոխարինող է համարվել Ֆելիքս Կուլովը, որը 2000 թ. բանտարկված էր պետական ունեցվածքը յուրացնելու ամբաստանությամբ: Ակնհայտ է, որ ընդամենը մի քանի օր առաջ բանտարկությունից ազատված Կուլովը եւ ունի նախագահական հավակնություններ:

ԵԱՀԿ-ն իրատեսական չի համարում հուլիսի 26-ին երկրում նախագահական ընտրություններ անցկացնելը, քանի որ դեռեւս չեն կարգավորվել սահմանադրական շատ հարցեր: Կիրգիզիայում ԵԱՀԿ դեսպանորդ Մարկուս Մյուլլերն անհրաժեշտ է համարել, որ հին եւ նոր խորհրդարանները, ինչպես նաեւ երկրի ազդեցիկ կլանները, խնդիրները լուծեն երկխոսության ճանապարհով:

Ի տարբերություն վրացական եւ ուկրաինական դեպքերի, Կիրգիզիայի պարագայում Ռուսաստանն ու ԱՄՆ-ն իրենց հայտարարություններում ավելի զգույշ են: Մասնավորապես Վլադիմիր Պուտինը քաղաքական աղաստան տալով Ասկար Ակաեւին, ակնհայտորեն հասկացնում է, որ Մոսկվան նոր իշխանությունների հետ հարաբերություններում խնդիրներ չունի: Արդեն իսկ տեղի է ունեցել Պուտին-Բակիեւ հեռախոսազրույց:

Ի դեպ, Կիրգիզիան եզակի երկրներից է, որն իր տարածքը տրամադրել է միաժամանակ ԱՄՆ-ի եւ Ռուսաստանի զինուժին: 2001 թ. սեպտեմբերի 11-ից հետո «Մանաս» օդանավակայանն օգտագործում է ամերիկյան զինուժը՝ Աֆղանստան թռիչքների համար: Ամերիկացիները հայտարարում են, որ Կիրգիզիայում կմնան այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ է: 2003 թ. հոկտեմբերին Ռուսաստանը ռազմակայան հիմնեց Կանտ քաղաքում, որն ընդամենը 25 կմ է հեռու «Մանասից»:

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ

Մշակույթ

Կեսդարյա արվեստի գնահատականը

Ամի թատերական արվեստում բեմադրիչ, թատերական գործիչ Երվանդ Ղազանչյանը այն անձնավորությունն է, որը կամրջում է անցյալի եւ այսօրվա թատերական արվեստն ու նրա մեծերին: Նա թատերական արվեստի պատմության վավերագրողն է, քանզի նրա ստեղծագործական կյանքը սկսվել է հայ բեմի աստղաբույլի՝ Վահրամ Փափազյանի, Վարդան Աճեմյանի, Գուրգեն Ջանիբեկյանի, Արուս Ասրյանի, Մեսախյա Սիմոնյանի, Բաբկեն Ներսիսյանի, Կարո Խաչվանքյանի, Վարդուհի Վարդերեսյանի, Մհեր Մկրտչյանի, Սոս Սարգսյանի եւ էլի շատ նշանավոր արվեստագետների գործունեությանը համատեղ: Երվանդ Ղազանչյանն ամբողջացրել է նրա ուսուցիչների նկատմամբ՝ տալով նրանց մարդկային արժանավայել կերպարների ճիշտ բնութագրումը: Հեղինակը մանրակրկիտ ձեւով ուսումնասիրել է Երվանդ Ղազանչյան դերասանի կատարումները տարբեր բեմերում, վերլուծել նրա դերասանական կարողությունները, ժամանակին տրված գնահատականները:

Երվանդ Ղազանչյանի բեմական աշխատանքները սկսվեցին 1960-ականների սկզբներին: Ալ. Շիրվանզադեի անվան պետական թատրոնում Երվանդ Ղազանչյանը բեմադրել է «Ցեմ վճարի», «Ոսկի ախաղաղ», «Ցար ոգի», «Անառակ որդին», «Բրոտդիի ամրոցը», «Մոր սիրտը չի խաբի», «Հավատարիմ եմ ձեզ» ներկայացումները: Բեմադրված ներկայացումներում ռեժիսորը հանդես է եկել նաեւ որպես դերակատար: Այդ մասին Վարդան Աճեմյանը նկատել է. «Ռեժիսորությունն չի կարելի սովորել, այն ներքուստ կոչված պիտի լինի: Ռեժիսորը միաժամանակ դերասան պիտի լինի: Այդպիսին է ծնվել մեր Երվանդը»: Սանկտ Պետերբուրգի դրամատիկական մեծ թատրոնի գլխավոր ռեժիսորը, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Գեորգի Տովստոնոգովը, լրացնելով Վ. Աճեմյանի միտքը, գրել է. «Աշխատանքի բերումով ես շատ էի շփվում մեր թատրոնի սիրելի Երվանդ Ղազանչյանի հետ եւ որքան մոտիկից էի ճանաչում նրան, այնքան ավելի էի համոզվում, որ նա իր ազգային բարդ նկարագրով աճեմյանական դպրոց անցած հետաքրքրական ստեղծագործող է, եւ կասկած չունեի, ավելի ճիշտ վստահ էի, որ շատ շուտով նա լավ բեմադրիչի հայտ է ներկայացնելու: Ահավասիկ, այդ «հետո» չուշացավ, եւ Սունդուկյանի անվան թատրոնն իր խաղացանկում գրանցեց «Ապուշի» ղազանչյանական բեմադրությունը, որն անկասկած անմոռանալի արժեք է հայ թատրոնում»:

Երվանդ Ղազանչյանը մայր թատրոնում բեմադրեց «Ուրիշի երեխան», «Վշտից փախչողը բախտ չի տեսնի», «Ապուշը», «Ամեն ինչ լավ է, թե լավ վերջանա» ներկայացումները: Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը բեմադրիչի մասին գրեց. «Ի հպարտություն մեզ՝ երիտասարդ բեմադրիչ Երվանդ Ղազանչյանի ներկայացումն իր ամբողջությամբ կարծես մի անմոռաց մեղեդի լինի... Բարության, ճշմարտության ու գեղեցկության դրամա լինելով՝ այն նաեւ մարդկային տառապանքների ու ձգտումների վեհ պոեզիա է»: Երվանդ Ղազանչյանն այն ռեժիսորներից է, որի բեմադրությունները արժանացել են հանրաճանաչ արվեստագետներ Գոհար Գասպարյանի, Տիգրան Լեւոնյանի, Սոս Սարգսյանի, Գեւորգ Աբաջյանի, Երվանդ Քոչարի, Սեւակ Արզումանյանի, Բաբկեն Ներսիսյանի, Լեւ Կուլիջանովի եւ այլոց բարձր գնահատականներին: Գյումրիի Վարդան Աճեմյանի անվան դրամատիկական թատրոնում Դոստոեւսկու «Ոճիր եւ պատիժ» ներկայացման Ղազանչյանի բեմադրության մասին Վ. Ռոգովը գրում է. «Ոճիր եւ պատիժ» ներկայացումը Գյումրիի դրամատիկականի բեմում թատերական ոչ սովորական երեւույթ է: Ստացվել է ուժեղ, տաղանդավոր ներկայացում, որ արդիական է բառի լավագույն իմաստով: Հավատացած եմ, որ թատրոնից ընդհանրապես եւ Երվանդ Ղազանչյանից մասնավորապես, մենք իրավունք ունենք սպասելու հետաքրքրական ու նշանակալից շատ գործեր»: Երվանդ Ղազանչյանի մեծ ձեռքբերումները իրականացել են նաեւ Պատանի հանդիսատեսի պետական թատրոնում, որ նա տասը տարիների ընթացքում կատարել է բազմաթիվ բեմադրություններ:

Երվանդ Ղազանչյանի բեմական հաջողությունները գրանցվել են նաեւ Հրաչյա Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում բեմադրած «Երկիր Նաիրի» ներկայացման առիթով: Որպես թատերական ուշագրավ երեւույթ՝ այս ներկայացմանը անդադարձան հանդիսատեսության մամուլի գրեթե բոլոր օրգանները, թատերագետներն ու գրողները՝ արժեւորելով բեմադրիչի ստեղծագործական էական ձեռքբերումները:

«Երկիր Նաիրի» վեպը հոգեկան դրամա է, որը Երվանդ Ղազանչյանի բեմականացման եւ բեմադրության մեջ արտահայտված է ճիշտ՝ շեշտված քաղաքացիական երգիծանքով: Բեմականացման հնարներն արված են չափի զգացումով, չարենցյան փիլիսոփայությանն ու խոսքի ուժին հավատարիմ: Բեմադրողը հավատարիմ է մնացել չարենցյան ոգին», գրում է Հրանտ Թամրազյանը: Երվանդ Ղազանչյանը հեռուստատեսային մի շարք բեմադրությունների հեղինակ է: Նրա բազմաթիվ բեմադրություններ ներկայացվել են աշխարհի մի շարք քաղաքներում եւ արժանացել գովասանքի:

Երբ ծանոթանում ես այս հազվագյուտ մտայանին, ինքդ քեզ հարց ես տալիս՝ ինչպես է հաջողվել հեղինակին հավաքելու այսքան հարուստ փաստեր՝ կարծիքներ, ելույթներ, գրախոսականներ, ու ինչպիսի բարեխղճությամբ է դասդասել ու անթերի ներկայացրել ընթերցողին: Այս հարցում արդեն զարմացնում է արվեստի նվիրյալ Ս. Առաքելյանը՝ իր գիտելիքների կարողություններով ու բծախնդրությամբ: «Սվետլանա Գրիգորյան», «Կարո Խաչվանքյան» գրքերից հետո հեղինակի երրորդ խոշոր աշխատանքն է «Երվանդ Ղազանչյան» գիրք-ալբոմը հայ թատերական արվեստում:

ՌՈԲԵՐՏ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Երիտասարդները փորձում են իրենց ուժերը

Մայիսի 7-13-ը Հայաստանի կինոմատոգրաֆիստների միությունը կազմակերպում է «Ես եմ» միջազգային երիտասարդական կինոփառատոն, որին կարող են մասնակցել ստեղծագործողներ Հայաստանից, սփյուռքից եւ արտերկրից: Մասնակիցները պետք է լինեն մինչեւ 35 տարեկան եւ պետք է ներկայացնեն 2004-2005 թթ. արված աշխատանքներ: Ընդ որում, այդ աշխատանքները կինոմիություն պետք է ներկայացվեն մինչեւ 2005 թ. ապրիլի 7-ը, VHS կամ DVD ֆորմատներով:

«Ես եմ» միջազգային փառատոնը մրցանակներ է նախատեսել հետեւյալ ինը անվանակարգերում՝ լավագույն խաղարկային, վավերագրական, անիմացիոն ֆիլմեր, լավագույն ուսանողական, օպերատորական, ռեժիսորական աշխատանքներ, լավագույն երաժշտական, գովազդային կլիպներ եւ լավագույն տեսարան: 12 հոգուց բաղկացած դատակազմը ղեկավարում է կինոմիության նախագահ Ռուբեն Գետրգյանցը:

Փառատոնի կազմկոմիտեի անդամ Նինա Օրդոյանը նշում է, որ մինչ այժմ ներկայացված 40 աշխատանքներում գերակշռում են վավերագրական ֆիլմերը: Նրա խոսքերով արդեն աշխատանքներ են ներկայացվել Մոսկվայից, Պարսկաստանից, ԱՄՆ-ից:

Միջազգային երիտասարդական փառատոնը կանցկացվի կինոմիությունում, իսկ արդյունքները կամփոփվեն մայիսի 13-ին:

ԳՈՀԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԹԱՏՐՈՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԸ

Թատրոնը տոն է ինքնին

Թատրոնի միջազգային օրվա կապակցությամբ երկրի նախագահի ներկայացուցիչը մշակույթի փոխնախարար Կարինե Խոդիկյանի հետ այցելեցին քաղաքում գործող 11 թատրոններ ու շնորհավորեցին, կրկին ծաղոքացան թատրոնների խնդիրներին ու դժվարություններին, խոստանալով հնարավորինս օգնել ու աջակցել:

Կարինե Խոդիկյանի համար «թատրոնը տարվա բոլոր օրերին թատրոնի օր է եւ տոն»: Հայաստանի թատերական գործիչների միության նախագահ, պետական մրցանակի դափնեկիր Երվանդ Ղազանչյանը տոնի առթիվ շնորհավորեց բոլորին եւ ավելացրեց. «Եթե թատրոնում լինում են նաեւ տխուր ու դժվար օրեր, դրանք անխուսափելի են, իսկ թատրոնն ամբողջությամբ զարմանալի մի տոն է, որից չես կարող ոչ մի պոչ բաժանվել: Թատրոնին նվիրված անձը չի կարող առանց թատրոնի... Իհարկե, շատ թատրոններ, հատկապես սահմանամերձ վայրերից՝ Կապան, Գորիս շատ անելիքներ ունեն, որպեսզի հոգետր կյանքի սոնին դառնա թատրոնը, եւ մարդիկ չհեռանան հարազատ բնօրրանից»: Պրն Ղազանչյանն առիթն օգտագործելով շնորհավորեց, ջերմ ողջույն հղեց Ստեփանակերտի, Թբիլիսիի թատրոնների կոլեկտիվներին, որտեղ վերջերս թեպետ դանդաղ, բայց դրական տեղաշարժեր կան... «Ես մտահոգված եմ, ասում էր նա, որ հայ դրամատուգիան զարգացում չունի: Դրամատուգիան ծնվում եւ ստեղծվում է հենց թատրոնում եւ եթե հետ նայենք, ապա Չեխովը, Գորկին «ծնվեցին» Մխատում, գալով հայ դրամատուգիային, անցյալ դարի երկրորդ կեսերին, ապա Գիգի Տեր-Գրիգորյան, Արամ-Աշոտ Պապայան, Ժորա Հարությունյան, Ալեքսանդր Արամիսյան եւ այլք նույնպես «ծնվեցին» թատրոնում: Այս հարցում թատրոնները պետք է ուշադիր ու հետեւողական լինեն, եւ դրամատուգներն էլ գրեն հայ մարդու մասին, հայավարի մտածեն, այլ ոչ թե Երեւանում կատարվող գործողությունը հանգիստ կարող էր տեղի ունենալ այլ երկրում, բայց ոչ Հայաստանում, կամ միայն հերոսներին հայկական անվանումներ տալով գործը հայկական չի դառնում... Իսկ ամենամտահոգիչը, որ այսօր ինձ հուզում է, ընդգծեց պրն Ղազանչյանը, երիտասարդների մուտքն է թատրոններ: Իհարկե, կան, բացվում են ու շատ երիտասարդների վստահվում են գլխավոր դերեր, սակայն դա շատ քիչ է, որովհետեւ այնպիսի հզոր արյուն ու հոսք է անհրաժեշտ ներարկել, որ թատրոնները կարողանան աղահովել իրենց այսօրվա եւ վաղվա հեռանկարները... Մի բան էլ կա, դա էջմիածնում պետական թատրոնի հիմնումն է: Նման մեծ մարզում հոգետր կյանքը զարգացնել ու ժողովրդին պարգեւել այն ամենը, ինչից զրկված է մարզը... Ասեմ, որ այդ հարցի շուրջ հետաքրքրական զրույց ունեցել եմ Վեհափառ հայրապետի հետ, որը նույնպես շատ կարեւորեց նման նախաձեռնությունը, որն այդքան էլ մեծ ծախսեր չի պահանջում»:

Տոնի առթիվ կրկին շնորհավորելով թատրոնի մարդկանց ՀԹԳՄ նախագահը գտնում էր, որ ոչ թե տարին մեկ անգամ պետք է 10-15 դերասանների շնորհել կոչումներ, այլ մի շարք առիթներով, քանի որ իրապես կոչման արժանի մոտ 100 դերասաններ այսպես կոչված հերթի մեջ են ու տասնյակ տարիներ է հարկավոր, որ իրենց հերթն էլ գա, սակայն, ցավոք, շատերին այդ կոչումները տրվում են հետմահու, բայց չէ որ կարելի է մի փոքր շապել ու հնարավորություն տալ դերասանին վայելելու իր քրտնաջան աշխատանքի պտուղները: Ահա այստեղ է, որ խորհել ու գործել է պետք:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՐԿԱՐՅԱՆ

Հայ տարազրության մասին նոր աշխատություն

Արգամ Այվազյանի «Նախիջեւանը 1905 եւ 1918-19 թթ. կրակե շղթայի գոյամարտում» գիրքը, որի շնորհանդեսը տեղի ունեցավ օրերս գրողների միությունում, ներկայացնում է այժմյան Նախիջեւանի կազմում ընդգրկված պատմական Հայաստանի գավառների հայության 1905 եւ 1918-19 թթ. կոտորածները տեղի թաթար-թուրքական ուժերի կողմից: Հեղինակ Արգամ Այվազյանը 1965 թ.-ից զբաղվում է Նախիջեւանի պատմաճարտարապետական ժառանգության, պատմության ու մշակույթի, արվեստի ու վիմագրության ուսումնասիրությամբ: Սա Արգամ Այվազյանի 15-րդ աշխատությունն է Նախիջեւանի մասին: Երկու ընդարձակ գլուխներից բաղկացած այս գրքում, հեղինակի խոսքերով, առաջին անգամ շրջանառության մեջ են դրվել բազմաթիվ նոր աղբյուրներ, արխիվային փաստաթղթեր եւ հուշագրություններ: Բացի այդ, ինչպես նշված է գրքի շնորհանդեսի ժամանակ տրված մամուլի հաղորդագրության մեջ, աշխատությանը առդիր հրատարակվել են նաեւ Նախիջեւանի հայոց բնակավայրերի արխիվային եւ ժամանակակից իրավիճակները պատկերող շուրջ 100 լուսանկարներ, բնակավայրերի եւ հայոց հուշարձանները պատկերող քարտեզներ:

ԱՐԳԱՄ ԱՅՎԱԶՅԱՆ

ՆԱԽԻՋԵՒԱՆԸ
1905 թ. եւ 1918-1919 թթ.
ԿՐԱԿԵ ՇՂԹԱՅԻ
ԳՈՅԱՄԱՐՏԵՐՈՒՄ

Գրքի շնորհանդեսին ելույթ ունեցողները («Երկիր եւ մշակույթ» համազգային կազմակերպության ներկայացուցիչ Հակոբ Պետրոսյանը, բանասիրական գիտությունների թեկնածու Արտակ Վարդանյանը, գիտությունների թեկնածու Սարգիս Հայրապետյանը եւ այլք), Նախիջեւանի հետ սերտ կապելով հեղինակի անունը, ոչ միայն համառոտ ներկայացրին գրքի բովանդակությունը, այլեւ խիստ կարեւորեցին նման աշխատության գոյությունը: «Երկիր եւ մշակույթ» համազգային կազմակերպության ներկայացուցիչ Հակոբ Պետրոսյանն իր խոսքում նշեց, որ նման գրքերը շատ կարեւոր են եւ կգա ժամանակ, երբ դրանք հող կդառնան:

ԳՈՀԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՇԱԳՐԱՆԿԱՐՅԻ ԱՅԲԵՐՈՎ



Հաղթեցին, բայց բարձրակարգ խաղ չցուցադրեցին

Հայաստանի ազգային հավաքականը վերջապես անդրանիկ հաղթանակը տոնեց: Թեեւ Անդորրայի հավաքականն իր խաղամակարդակով զգալիորեն զիջում էր մեր ընտրանուն, սակայն հայ ֆուտբոլիստներին հաղթանակը հեշտությամբ չտրվեց: Ողջ հանդիպման ժամանակ ունենալով խաղային եւ տարածքային զգալի առավելություն, այնուամենայնիվ, մեր ֆուտբոլիստներին չհաջողվեց գոլային բազմաթիվ պահեր ստեղծել եւ լրջորեն սպառնալ մրցակցի դարպասին: Հյուրերն ակնհայտորեն ընտրել էին պաշտպանական մարտավարություն եւ ողջ հանդիպման ժամանակ գրեթե ողջ թիմով զբաղված էին սեփական դարպասի պաշտպանությամբ: Տավոք, մեր ֆուտբոլիստներին չէր հաջողվում ճեղքել հյուրերի պաշտպանական պատնեշը: Ավելորդ չէ նշել, որ գոլային առաջին պահը մեր ֆուտբոլիստները ստեղծեցին միայն 24-րդ րոպեին, սակայն ձախ թեւից Քարամյանի փոխանցմանը չհասան նրա խաղընկերները: 6 րոպե անց մեր հավաքականին վերջապես հաջողվեց գեղեցիկ եռախայլ կոմբինացիայի արդյունքում բացել հաշիվը: Լավ համագործակցեցին Նազարյանն ու Մխիթարյանը, եւ վերջինս նուրբ փոխանցումով հարվածի դուրս բերեց Հակոբյանին, որն էլ դիպուկ հարվածով գրավեց մրցակցի դարպասը: Մինչ ընդմիջման գնալը մեր թիմը կարող էր կրկնապատկել հաշիվը, սակայն Քարամյանի գլխի հարվածը մի փոքր շեղ սացվեց:

Թվում էր, թե ընդմիջումից հետո մեր հավաքականին կհաջողվի զարգացնել հաջողությունը: Բայց տեղի ունեցավ անսպասելին: Անդորրայի հավաքականը, որ հազվադեպ էր հայտնվում մեր կիսադաշտում, տուգանային հարվածից հետո վերականգնեց հավասարակշռությունը: Դա կարծես սառը ցնցոտի դեր կատարեց մեր ֆուտբոլիստների համար, որոնք ստիպված էին ողջ թիմով նետվել գոհի: Ի պատիվ մեր ֆուտբոլիստների, ի վերջո հաջողվեց խփել հաղթական գնդակը: Տարօրինակ էր, որ պարտվելով 1-2 հաշվով, մրցակիցը չէր դիմում ակտիվ գործողությունների: Իսկ մեր մարզիչներն էլ փոխանակ իրենց սաներին գոհի առաջնորդելու, ցուցում էին տալիս զգելու խաղի տեմպը, խաղալու հաղթական հաշիվը պահպանելու համար: Եվ ինչ էր մնում նման զգուշավորության պատճառով հաղթանակը ձեռից բաց թողնվեր: Լավ է, որ խաղավերջում իր վարպետությամբ աչի ընկավ կրկին հավաքական վերադարձած Ռոման Բերեզովսկին՝ փրկելով թիմին գոլից:

Իհարկե, հաղթանակն ուրախալի է, սակայն խոստովանենք, որ մեր հավաքականի ցուցադրած խաղի որակը բնավ էլ չգոհացրեց ֆուտբոլասերներին: Ավելի բարձր խաղամակարդակ ունեցող հավաքականների հետ նման խաղով դժվար է հաջողություն ակնկալել: Իսկ չէ՞ որ առաջիկայում մեր ընտրանուն ավելի դժվարին մրցախաղեր են սպասում: Մասնավորապես, մարտի 30-ին ՀՀ հավաքականին լուրջ քննություն է սպասվում Հոլանդիայում: Խաղից հետո կայացած մամուլի ասուլիսում մարզիչները հետեւյալ կարծիքները հայտնեցին հանդիպման մասին:

Բեռնար Կազոնի (ՀՀ հավաքական)- Հաղթանակի առթիվ առաջին հերթին շնորհավորում եմ իմ ֆուտբոլիստներին, քանի որ շատ ծանր պայմաններում էինք նախապատրաստվել հանդիպմանը: Բացակայում էին հիմնական կազմի մի քանի ֆուտբոլիստներ, որոնց արժանիորեն փոխարինեցին: Արժանի հաղթանակ տոնեցինք: Գոլային պահեր շատ ունեցանք, սակայն միայն 2 գոլ խփեցինք: Գոհ եմ խաղի որակից, քանի որ հաջողվեց ճեղքել մրցակցի զանգվածային պաշտպանությունը: Հոլանդացիների հետ խաղն ուսանելի կլինի մեզ համար, նման կարգի հանդիպումներում մեր ֆուտբոլիստները սովորելու շատ բան ունեն: Այդ խաղում մեզ հետաքրքիր դեր են հատկացրել: Մենք կորցնելու ոչինչ չունենք, կփորձենք լավ խաղ ցուցադրել:

Դավիթ Ռոդրիգո (Անդորրայի հավաքական)- Ինչպես եւ սպասվում էր, մեզ համար դժվարին մրցախաղ սպասվեց: Հայաստանի հավաքականն իր նեռուժով, իհարկե, ուժեղ է մեզանից, ուստի մեր գլխավոր խնդիրը սեփական դարպասի պաշտպանությունն էր: Մեր թիմից բացակայում էին 3 պրոֆեսիոնալ ֆուտբոլիստներ, ինչը դժվարություններ էր առաջացրել: Իմ սաներն իրենց ողջ կարողությունները նետեցին, եւ ես գոհ եմ նրանց խաղից: Եվ այն, որ հայերը նվազագույն հաշվով տոնած հաղթանակի համար չափազանց ուրախացել էին, խոսում է մեր հանդեպ նրանց դրսեւորած լուրջ վերաբերմունքի մասին:

Հայաստան-Անդորրա՝ 2-1 (1-0)

26 մարտի, Երեւան, «Հանրապետական» մարզադաշտ, 5000 հանդիսական:

Մրցավար՝ Ժոզեֆ Ասարդ (Մալթա):

Հայաստան- Ռոման Բերեզովսկի, Եղիշե Մելիքյան, Կարեն Դոխոյան, Ռոբերտ Արզումանյան, Կարեն Ալեքսանյան, Ռոմիկ Խաչատրյան, Արա Հակոբյան (Արամ Ոսկանյան, 90), Ռաֆայել Նազարյան (Ռոմեո Զենեբյան, 72), Համլետ Մխիթարյան, Արմեն Շահգելդյան, Արտավազդ Քարամյան (Աղվան Մկրտչյան, 71):

Անդորրա- Խեսուս Ալվարես, Խոսեպ Այալա, Խորդի Էսկուտա, Խոսե Գարսիա, Խուլի Ֆեռնանդես, Օսկար Սոնեխե, Մարկ Պուխոլ, Անտոնի Սիվերա (Խուլի Սանչես, 87), Ֆեռնանդո Սիլվա (Խավի Մարտին, 90), Մանոլո Խիմենես (Զենիս Գարսիա, 78), Խուան Ռուիս:

Գոլերը՝ Հակոբյան (30), Սիլվա (56), Խաչատրյան (73):

Զգուշացվեցին Հակոբյանն ու Խաչատրյանը:

ցիների հետ խաղն ուսանելի կլինի մեզ համար, նման կարգի հանդիպումներում մեր ֆուտբոլիստները սովորելու շատ բան ունեն: Այդ խաղում մեզ հետաքրքիր դեր են հատկացրել: Մենք կորցնելու ոչինչ չունենք, կփորձենք լավ խաղ ցուցադրել:

Դավիթ Ռոդրիգո (Անդորրայի հավաքական)- Ինչպես եւ սպասվում էր, մեզ համար դժվարին մրցախաղ սպասվեց: Հայաստանի հավաքականն իր նեռուժով, իհարկե, ուժեղ է մեզանից, ուստի մեր գլխավոր խնդիրը սեփական դարպասի պաշտպանությունն էր: Մեր թիմից բացակայում էին 3 պրոֆեսիոնալ ֆուտբոլիստներ, ինչը դժվարություններ էր առաջացրել: Իմ սաներն իրենց ողջ կարողությունները նետեցին, եւ ես գոհ եմ նրանց խաղից: Եվ այն, որ հայերը նվազագույն հաշվով տոնած հաղթանակի համար չափազանց ուրախացել էին, խոսում է մեր հանդեպ նրանց դրսեւորած լուրջ վերաբերմունքի մասին:

Մրցաշարային աղյուսակ

1-ին խումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Հոլանդիա	5	4	1	0	12-3	13
2. Չեխիա	5	4	0	1	10-5	12
3. Ռումինիա	6	3	1	2	10-7	10
4. Ֆինլանդիա	6	3	0	3	13-10	9
5. Մակեդոնիա	6	1	2	3	6-7	5
6. Հայաստան	6	1	1	4	4-13	4

Լեհերը ջախջախեցին ադրբեջանցիներին

Ֆուտբոլի աշխարհի առաջնության եվրոպական գոտու ընտրական մրցաշրջանում կայացավ 17 հանդիպում: Բնականաբար, մեր ֆուտբոլասերներին առաջին հերթին հետաքրքրում են Հայաստանի հավաքականի մրցակիցների մասնակցությամբ մրցախաղերի արդյունքները: Հոլանդիայի հավաքականը, որի հետ վաղը հյուրընկալվելիս մրցելու է մեր ընտրանին, մրցակցի դաշտում 2-0 հաշվով պարտության մատնեց ռումինացիներին եւ գլխավորեց ընտրական առաջին խմբի աղյուսակը: Արդեն 38-րդ վայրկյանին Ֆիլիպ Կոկոն անկյունայինի խաղարկումից հետո բացեց հաշիվը: Խաղավարտից 5 րոպե առաջ Բաբելը կրկնապատկեց հաշիվը: Հոլանդացիների համար խաղը հաջող դասավորվեց, եթե չհաշվենք «Չելսիի» կիսապաշտպան Արիեն Ռոբենի ստացած ծանր վնասվածքը: Վերջինս 21-րդ րոպեին ստիպված էր թողնել խաղադաշտը: Նա չի մասնակցի Հայաստանի հավաքականի հետ հանդիպմանը: Մինչեւ ռումինացիների հետ հանդիպումը Հոլանդացիները կազմում եւ մեկ կորուստ էին տվել: Մարզման ժամանակ վնասվածք էր ստացել «Ալկմարում» հանդես եկող Մարթեյն Մեերդինկը, որին առաջին անգամ էին հրավիրել հավաքական:

Դրամատիկ ու գոլառատ պայքարում անցավ Չեխիա-Ֆինլանդիա մրցախաղը: Չեխերը Բարոշի եւ Ռոսիցկու խփած գոլերի շնորհիվ խաղը շահում էին 2-0 հաշվով, սակայն ֆիններին հաջողվեց 79-րդ րոպեին վերականգնել հավասարակշռությունը (3-3): Չեխերի պատիվը փրկեց Լոկվենցի հաղթական գնդակը: Այս հաղթանակի շնորհիվ չեխերը տեղափոխվեցին 2-րդ հորիզոնական:

Կայացած հանդիպումներում ամենախոշոր հաշիվը գրանցվեց Լեհաստանի եւ Ադրբեջանի հավաքականների մրցախաղում: Լեհերը 8 անպատասխան գնդակ խփեցին՝ ջախջախելով մրցակցին: Ավելի խոշոր հաշվով (0-10) ադրբեջանցիները նախկինում պարտվել էին 1995 թ. ֆրանսիացիներին: Վերջիններիս ոչ մի կերպ չի հաջողվում հաղթել սեփական դաշտում: Ընթացիկ մրցաշրջանում Ֆրանսիայի հավաքականը դեռեւս «Սպադ դը Ֆրանս» մարզադաշտում չի ճաշակել հաղթանակի քաղցրությունը: Նման բան տեղի չէր ունեցել վերջին 71 տարիներին:

Անսպասելի էր բուլղարացիների պարտությունը սեփական հարկի տակ շվեդներից (0-3): Քրիստո Ստոիչկովի սաներն առաջին պարտությունը կրեցին:

Ընտրական մյուս հանդիպումներում գրանցվել են հետեւյալ արդյունքները. Վրաստան-Հունաստան՝ 1-3, Թուրքիա-Ալբանիա՝ 2-0, Դանիա-Ղազախստան՝ 3-0, Լիխտենշտեյն-Ռուսաստան՝ 1-2, Էստոնիա-Սլովակիա՝ 1-2, Ֆրանսիա-Շվեյցարիա՝ 0-0, Իսրայել-Իռլանդիա՝ 1-1, Իտալիա-Շոտլանդիա՝ 2-0, Անգլիա-Հս. Իռլանդիա՝ 4-0, Ուելս-Ավստրիա՝ 0-2, Բելգիա-Բոսնիա՝ 4-1, Խորվաթիա-Իսլանդիա՝ 4-0:

Հայտարարություն

ARMENTEL
ԱՐՄԵՆԻԱ ՏԵԼԵՖՈՆ ԿՈՄՊԱՆԻԱ
ARMENIA TELEPHONE COMPANY

«Արմենտել»-ը հայտարարում է միջազգային բաց մրցույթ էլեկտրամոնտյորի KM 1 տեսակի 346 զույգ, KM 2 տեսակի 348 զույգ ճանկերի եւ 631 հատ պահպանման գոտիների մատակարարման համար:

Մրցույթին կարող են մասնակցել ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան անհատ ձեռնարկատերեր եւ կազմակերպություններ: Տեղական կազմակերպությունները, որոնք ցանկանում են մասնակցել մրցույթին՝ պետք է գրանցված լինեն պետական ռեգիստրում:

Մրցույթի առաջարկները կգնահատի մրցութային հանձնաժողովը: Հանձնաժողովը որոշումներ կընդունի ձայների պարզ մեծամասնությամբ: Հաղթողին որոշելու կարգը (գնահատման չափանիշները), մրցութային լոտի նկարագրերը մանրամասն նկարագրված է «Մրցույթի կանոնակարգ-մրցույթի պայմաններ»-ում, որը շահագրգիռ անձինք կարող են ստանալ, ինչպես նաեւ հայտերը ներկայացնել 2005 թ.-ի մարտի 29 -ից մինչեւ մայիսի 3 -ը՝ ամեն աշխատանքային օր, ժամը 10:00 - 16:00 հետեւյալ հասցեով՝

«Արմենտել» ՀՁ ՓԲԸ, Ահարոնյան 2, 2-րդ հարկ, 216 սենյակ, հեռ՝ 374 1 28-70-66:

Մրցույթի հայտերի բացման նիստը տեղի կունենա 2005 թ.-ի մայիսի 10 -ին, ժամը 11:00-ին հետեւյալ հասցեով՝ Հայաստանի Հանրապետություն, Երեւան 375033, «Արմենտել» ՀՁ ՓԲԸ, Գյուլբենկյան 30, 2 -րդ հարկ, տեխնիկական բաժին, իսկ մրցույթի հայտերի ամփոփիչ նիստը՝ 2005 թ.-ի հունիսի 15 -ին, ժամը 15:00-ին՝ նույն հասցեով:

«Արմենտել» ՀՁ հասարակայնության հետ կապերի ծառայություն

Հասարակայնության ծանուցում

ՀՀ բնապահպանության նախարարության ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն մշակվում է **ՀՀ Արագածոտնի մարզի «Էլ-Կաս» ՍՊԸ** կողմից Գեղարոտ գետի վրա ՀԷԿ-ի կառուցման համար ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին, ժամը 17-18-ը դիմել ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2005 թ. ապրիլի 7-ին, ժամը 16:00-ին, Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

ՀՀ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Հասարակայնության ծանուցում

ՀՀ բնապահպանության նախարարության ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն մշակվում է **ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան հաղորդում գործող «Սագանիս» ՍՊԸ** առատրական նպատակով 3.3 լիտր վրկ. ստորերկրյա ջրային ռեսուրսներից ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին, ժամը 17-18-ը դիմել ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2005 թ. ապրիլի 7-ին, ժամը 16:00-ին, Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

ՀՀ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Կենտրոն համայնքի թ. 49 մանկապարտեզ ՀՈԱԿ-ը **հայտարարում է մրցույթ** սննդամթերքի ձեռքբերման համար: Մրցույթի փաթեթների ստացման, ներկայացման եւ այլ մանրամասների համար դիմել հետեւյալ հասցեով՝ Երեւան, Հանրապետության 62, հեռ.՝ 54-04-41:

Կենտրոն համայնքի թ. 163 մանկապարտեզ ՀՈԱԿ-ը **հայտարարում է մրցույթ** սննդամթերքի ձեռքբերման համար: Մրցույթի փաթեթների ստացման, ներկայացման եւ այլ մանրամասների համար դիմել հետեւյալ հասցեով՝ Երեւան, Հանրապետության 71, հեռ.՝ 52-27-52:

ԲՈՔՍԱՄԱՐՏ

Դարչինյանը պահպանեց չեմպիոնի տիտղոսը

Ավստրալիայում բնակվող վանաձորցի պրոֆեսիոնալ բոքսամարտիկ Վախթանգ Դարչինյանը պահպանեց թեթեւագույն քաշում բոքսամարտի միջազգային ֆեդերացիայի (IBF) վարկածով աշխարհի չեմպիոնի իր տիտղոսը: Ավստրալական Հոումբուշ Բեյ քաղաքում անցկացված մենամարտում նա տեխնիկական նոկաուտով հաղթեց հարավաֆրիկացի Մզիկուսի Սիկալիին: Դարչինյանի առավելությունն այդ մենամարտում նկատելի էր, որի արդյունքում մրցակցի մարտավարությունը ստիպված էր 8-րդ ռաունդում դադարեցնել մենամարտը՝ ընդունելով իր սանի պարտությունը: Այս հաղթանակը Դարչինյանին նաեւ բոքսամարտի միջազգային կազմակերպության (IBO) վարկածով աշխարհի չեմպիոնի տիտղոսին արժանացրեց, որին մինչ այդ տիրում էր Սիկալին: Պրոֆեսիոնալ ռինգում դա հայ բոքսամարտիկի 24-րդ մենամարտն էր, որոնք բոլորն էլ ավարտվել են

AP-PHOTO/LURE

Վախթանգի հաղթանակով: Դրանցից 18-ում Վախթանգը մրցակիցներին հաղթել է նոկաուտով: Հարավաֆրիկացի բոքսամարտիկը 38-րդ հանդիպումն էր անցկացնում եւ 7-րդ պարտությունը կրեց:

Պարտությունը չասասանեց Անանդի դիրքերը

Մոնտե Կառլոյում ավարտին է մոտենում շախմատի միջազգային մրցաշարը: Վերջին երեք տուրերում մրցաշարի առաջատար Անանդն անդրանիկ պարտությունը կրեց: 6-րդ տուրում ոչ-ոքի ավարտելով Մորոզեւիչի հետ երկու պարտիաներն էլ, հաջորդ տուրում Անանդը Բարեեւի հետ արագ շախմատի պարտիայում առաջին պարտությունը կրեց՝ «կույր» շախմատի մրցախաղն ավարտելով ոչ-ոքի: Սակայն այդ անհաջողությունը չազդեց Անանդի մրցաշարային վիճակի վրա: 8-րդ տուրում հնդիկ գրոսմայստերը 1,5-0,5 հաշվով պարտության մատնեց Լեկոյին եւ 12 միավորով շարունակում է վստահորեն գլխավորել աղյուսակը:

Երկրորդ հորիզոնականը 9,5 միավորով զբաղեցնում է Վասիլի Իվանչուկը: Նա միեւնույն 1-1 հաշվով ավարտեց մրցախաղերը Գելֆանդի ու վան Վելիի հետ, իսկ Սվիդլերին պարտության մատնեց 1,5-0,5 հաշվով: 3-րդ տեղը 9 միավորով զբաղեցնում է Մորոզեւիչը:

AMERICAN EMBASSY YEREVAN
VACANCY ANNOUNCEMENT

OPEN TO: All Interested Candidates
POSITION: Economic/Commercial Assistant, FSN-9; FP-5 (steps 1 - 4)
OPENING DATE: March 15, 2005
CLOSING DATE: March 29, 2005

The U.S. Embassy in Yerevan, Armenia is seeking an individual for the position of Economic/Commercial Assistant in the Political/Economic Section.

BASIC FUNCTION OF POSITION

Obtains information on matters relating to economic developments in Armenia and the region. Processes and analyses information and data on economic issues. Areas and fields of focus include: Environment, Science and Technologies (EST), including energy and water resources management, civil aviation, intellectual property rights protection, foreign investments, privatization, and other key sectors. Prepares factual and analytical reports on important trends, developments, and forecasts. Tracks, monitors, and researches projects sponsored by international organizations and the Government of Armenia that may present commercial opportunities to U.S. business.

A copy of the complete position description listing all duties and responsibilities is available on www.usa.am <http://www.usa.am> and in the Human Resources office. Contact number (3741) 52-46-61.

QUALIFICATIONS REQUIRED

NOTE: All applicants are instructed to address each selection criterion detailed below with specific and comprehensive information supporting each criterion.

University degree in economics or market research/business administration, or other closely related field is required

Minimum three years of progressively responsible job-related experience in economics, market research, trade promotion, business administration, or other closely related field is required.

Level IV (fluent) in English, Russian, and Armenian is required.

A good working knowledge of Armenia's economy, the local business customs and practices, marketing channels, and Armenia's government laws, regulations, and policies relating to the commodity/industry sectors for which responsible, as well as a good understanding of internal economic reporting requirements and procedures is required.

Computer literacy is required.

SUBMIT APPLICATION TO:

Human Resources Office
18 Baghramian Ave, Yerevan 375019, Armenia

Alternatively, you can e-mail your resumes/application to yerevanvacancies@state.gov

An Equal Opportunity Employer

Вклад Карточный 9%

Процентная ставка
9% годовых
Сумма вклада
от 1000 $
Срок вклада
1 год
Возможность овердрафта
50% от суммы вклада
Каждому клиенту подарок
пластиковая карта VISA



Стандартные вклады в драмах и валюте

Срок вклада	Выплата процентов	AMD		USD		EURO	
		от 50000 до 5 млн.	от 5 млн до 50 млн.	от 100 до 10000	от 10001 до 100000	от 100 до 10000	от 10001 до 100000
до востребования		0*	0*				
31 - 90 дней	в конце срока	5,5	6	5.5	6	5	5.5
	ежемесячно	5	5,5	5	5,5	4,5	5
91 - 182 дня	в конце срока	6,5	7	6.5	7	6	6.5
	ежемесячно	6	6.5	6	6.5	5.5	6
183 - 364 дня	в конце срока	7,5	8,5	7,5	8,5	7	7,5
	ежемесячно	7	7.5	7	7.5	6.5	7
365 - 550 дня	в конце срока	8	9	8	9	7.5	8.5
	ежемесячно	7,5	8,5	7,5	8,5	7	7,5

ЮНИБАНК 52 13 43
РЕАЛЬНЫЕ ЖЕЛАНИЯ www.unibank.am

Вклады превышающие 5 млн. AMD или 10 тыс. USD, EURO и/или сроком более 550 дней - по индивидуальным ставкам.
* в отдельных случаях процентная ставка определяется на договорной основе
Минимальная сумма срочных депозитов
50 000 AMD или 100 USD, EURO

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կասարի պետությունում առնվազն մեկ տարի ժամկետով, պայմանագրային հիմունքներով եւ բարձր աշխատավարձով աշխատելու համար ՀՀ կառավարությանն առընթեր միգրացիայի եւ փախստականների վարչությունը հավաքագրում է տարբեր մասնագիտությունների բժիշկների: Թեկնածուները պետք է ունենան անգլերեն լեզվի բավարար իմացություն եւ առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ:

Ցանկացողները կարող են դիմել վարչություն՝ ***Երեւան, Հր. Քոչարի 4 հասցեով, N 101 սենյակ, հեռ. 224727:***

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ ՄԱԿ-Ի ՊԱՐԵՆԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Հողերի միավորման հայեցակարգի եւ ռազմավարության փաստաթղթերի մշակման համար կազմակերպության ընտրության

ՄՐՑՈՒՅԹԻ ՀՐԱՎԵՐ

ՄԱԿ-ի պարենի եւ գյուղատնտեսության կազմակերպությունը ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի հետ համատեղ «Աջակցություն հողերի միավորման եւ հողաշինարարական սխեմաների պատրաստմանն ու իրականացմանը» ծրագրի շրջանակներում հայտարարում է հայտ/առաջարկների մրցույթ: Ծրագրի շրջանակներում նախատեսված աշխատանքներն են՝ գյուղատնտեսական նշանակության հողերի միավորման հայեցակարգի եւ ռազմավարության մշակումը:

Մրցույթին մասնակցել կարող են հետեւյալ պայմաններին բավարարող կազմակերպությունները.

1. ոլորտին առնչվող մասնագիտական ներուժի առկայություն,
2. վերլուծական եւ հետազոտական աշխատանքներ իրականացնելու փորձ:

Լրացուցիչ տեղեկություններին եւ ներկայացվելիք փաստաթղթերին ծանոթանալու համար կազմակերպությունները կարող են դիմել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի «Հողերի միավորման» ծրագրի գրասենյակ, Երեւան, Արշակունյաց 7 շենք, առաջին հարկ: Փաստաթղթերի եւ տեղեկատվության ներկայացման վերջնական ժամկետն է 2005 թ. ապրիլի 5-ը, ժամը 18:00:

The Eurasia Foundation
Representative Office in Armenia

announces job opening for the position of

INFORMATION TECHNOLOGY OFFICER

The role of the IT Officer is to plan, maintain, administer and develop EF Yerevan office computer, telecommunications and information systems and facilities.

Requirements:

- Master s degree in Computer Science.
- At least 2 years of full-time experience in Windows 2000 Server based LAN administration, Windows 2000/XP workstations administration, preferably at an international organization; experience with wireless LANs is a plus;
- At least 2 years of experience in database management systems administration (Sybase ASA and/or MS SQL Server), e-mail server administration, proxy-based 24/7 Internet access administration;
- Extensive experience in using MS Office software;
- Extensive experience in setting up/using peripheral computer and LAN equipment (laser printers, scanners, modems, etc.);
- Experience with minor hardware repairs and upgrades;
- Experience in implementing IT security measures to protect office IT infrastructure;
- Experience in the development and maintenance of websites using HTML / PHP / MySQL technologies;
- Fluent knowledge of English, Russian and Armenian languages;
- Microsoft Certified Professional status is desired.

To Respond:

Applicants should submit a letter of interest and resume in English before **April 4, 2005** to Country Director, Armenia
The Eurasia Foundation
4 Demirchyan Street, Yerevan, Armenia
Ph./fax: 56-54-78, 58-60-59, 58-61-59
E-mail: resume@eurasia.am

Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի գումարման հայտարարություն

Հարգելի բաժնետերեր,

2005 թ. մարտի 19-ին, ժամը 12:00-ին հրավիրված «Սիրիուս» ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը տեղի չի ունեցել իրավունքը չգործադրելու պատճառով:

Տեղեկացնում ենք, որ հաջորդ «Սիրիուս» ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը կկայանա 2005 թ. ապրիլի 16-ին, ժամը 12:00-ին հետեւյալ օրակարգով՝

1. Տարեկան ֆինանսատնտեսական հաշվետվության հաստատում,
2. Տարեկան հաշվեկշռի հաստատում,
3. «Սիրիուս» ԲԲԸ խորհրդի կազմի հաստատում,
4. Ընկերության ակտիվների նոր վերագնահատման հարցը,
5. Ընկերության հեռանկարային զարգացման ծրագրերի հաստատում:

Ժողովը տեղի կունենա հետեւյալ հասցեով՝ ք. Աբովյան, է. Պետրոսյանի 1:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել վերը նշված հասցեով կամ զանգահարել (022) 2-40-23 հեռախոսահամարով:

«ՍԻՐԻՈՒՍ» ԲԲԸ
ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 56-24-83

«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բագրատունեաց 70ա Գրանցման թիւ՝ 65, դասիչ՝ 69150 Տպաքանակը՝ 3000 Ստորագրված է տպագրության՝ 28. 03. 2005 Գինը՝ 100 դրամ